12 Բշ. ոյ. Ս. Մելիտոսի Անտիոքայ հայրապետին և Մինասայ եգիպտացւոյն և միւս Մելիտոսի եպ. Կորայ քահանային և Տինոս սարկաւագին։ 15

13 Գշ. ոզ. Ս. Դիմիտրեայ վկային և Բասիլիսոսի քահանային։ 16

14 Դշ. ոէ. Պահք։ 17

15 Եշ. ոը. Ս. Գուրեայ, Սամոնայ, Աբիբայ սարկաւագին, Ռամանոսի միայնակեցւոյն, Մանկանց խոստովանողաց և Հիւղքոսի գինուորին։ 18

16 Ուր. ոթ. Պահք։ 19

17 Շբ. ժ. Ս. Առաքելոյն Անդրէի և Փիլիպպոսի։ 20

18 ✠ Կիր. ժա. ԺԱ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Բարեկենդան Յիսնակի պահոց։ 21

19 Բշ. ժբ. 1. օր Յիսնակի պահոց։ 22

Վր. քռ. լս. Առաւօտուն եգ.

20 Գշ. ժգ. 2. օր Յիսնակի պահոց։ Յերեկոյեան Նախատօնակ։ 23

Օ ՆՈՅԵՄԲԵՐ Ն

21 ✠ Դշ. ժդ 3 օր Յիսնակի պահոց։ ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ի Տաճարին — Նաւ Յ. և Ռուսաց։ 24

22 Եշ. ժե. 3. օր Յիսնակի պահոց։ 25

23 Ուր. ժզ. 5. օր Յիսնակի պահոց։ 26

24 Շբ. ժէ. Ս. Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի հայրապետին և Աթանասայ եպիսկոպոսին։ 27

25 ✠ Կիր. ժը. Ա. Կիր. Յիսնակի Հարսանիք։ 28

26 Բշ. ժթ. Ս. կուսանացն Յուլիանեայ և Վասիլուհւոյ։ 29

27 Գշ. ի. Ս. Ղուկիանոսի քահանային և Տարաքոսի, Պրոբոսի, Անդրոնիկոսի, Ոնեսիմեայ և այլոց աշակերտացն Պօղոսի։ 1

☽ Նոր. լս. Առաւօտուն եգ.

28 Դշ. իա. Պահք։ 2

29 Եշ. իբ. Ս. Կղեմայ հայրապետին և Բագարատայ Տաւրոմենայ եպիսկոպոսին։ 3

30 Ուր. իգ. Պահք։ Յերեկ. Նախատօ. 4

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ն օրը պակասել է 1 ժ. 19 րոպէ։

---

ՆՈՅԵՄԲԵՐ.— Աղեղնաւորն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան քաջ է և արի, խելօք, բարեկամներ շատ գտնող, առողջակազմ, ճշմարտասէր, հաստատամիտ, փարուող, աշխատասէր, ի բնէ բարեպաշտ, սրտով ուրախ, բարի և իր ունեցած լաւ յատկութիւնների համեմատ՝ անչափ ինքնասէր։

Իսկ ծնուած աղջիկը՝ գործունեայ և աչալուրջ, աշխատասէր, բարեպաշտ, բարի և սրտով ուրախ։ Գլխաւոր պակասութիւնը իր կասկածոտ բնաւորութիւնն է։

Նոյեմբերին ծնուածներն առհասարակ արդիւնաբերութեան մէջ բախտաւոր են լինում և միջին տարիքում կարողութեան տէր։ 33 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են և եթէ չափաւոր ու ժուժկալ կեանք վարեն մինչև խորին ծերութեան կը հասնեն։



# ԴԵԿՏԵՄԲԵՐ

## 31 ՕՐ

Դեկտեմբեր ամիսը վերցրած է լատինական dectembre բառից, որ նշանակում է տասներորդ։ Այսպէս անուանեց ամիսների հիմնադիր Համուլոսը տարուայ տասներորդ ամիսը։ Մեր նախնիք այս ամիսը անուանել են Քաղոց։ Որովհետև Վրաստանում այս ամսի 25-ին կատարվում է Քրիստոսի Ծննդ. տօնը, այս պատճառաւ այս ամիսը վրացիք անուանել են Քրիստիշօբայ, կամ Քրիստիշօբիա-թվէ, որ նշանակում է Քրիստոսի Ծննդեան ամիս։

1 ✠ Եշ. Փք. Ս. Առաքելոց և առաջին Լուսաւորչացն մերոց ԹԱԴԷՈՍԻ և ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍԻ։ 5

2 ✠ Կիր. Փշ. Բ. Կիր. զկնի Յիսնակի։ Հարանիք։ 6

3 Բշ. Փք. Ս. Գենարնոսի եպիսկո- 7

պոսին և Մերկեռիոսի զինուո-
րին. Ակովբայ և Իրաւափառայ:
4 Գշ. փյ. Ս. ԱԲԳԱՐՈՒ Նախա- 8
վկայ և անդրանիկ Թագաւորին
մերոյ.
Ան. քռ. լռ. Ձմեռ եզ.
5 Դշ. տի. Պահք: 9
6 Եշ. ռյ. Ս. Հարցն Նիկիայոց- 10
ւոցն, Պօղոսի, Պօղոյ, Մակարայ,
Եւագրի, Յովհաննու Գրնեցւոյն,
Յովհաննու կարճահասակին, Նե-
ղոսի, Արսէնի, Սերափիոնի, Դանիէ-
լի, Սրապիոնի, Մակարիոսի, Մի-
ձնի և այլոց Ս. Հարցն:
Ց. և Ռուսաց՝ Ս. Նիկողայոսի
Սքանչելագործին:
7 Ուր. ռկ. Պահք: 11
8 Շբ. ջյ. Ս. Նիկողայոսի Զմիւռնաց- 12
ւոյ Սքանչելագործ Հայրապետին:
Ցերեկ. նախատօնակ:
9 ✱ Կիր. ճյ. ՏՕՆ ՅՂՈՒԹԵԱՆ 13
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի ՅԱՆՆԱՅԷ:
Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց



☼ Արեգակն՝ի յԱյծեղջիւրն մտանէ
12 ժ. օր. երեկ. Ձմեռնամուտ և
արեւադարձ. ցերեկն սկսանի եր-
կարել և գիշերն կարճանալ:
10 Բշ. ճյ. Պահք: Ս. Մինասայ, Երմո- 14
գինեայ և Գրաբոսի և կամաւոր
աղքատացն Յովհաննու և Ալէք-
սիանոսի:
11 Գշ. ճէ. Պահք: Ս. Կոռնելիոսի 15
հարիւրապետին և Շմաւոնի ազ-
գականին Քրիստոսի, որ խաչե-
ցաւ յԵրուսաղէմ, Պօղիկարպոսի
հայրապետին Զմիւռնիոյ և Ս.
վկայիցն, որք յԱրեւելս կատար.
☾ Նր. լուսին. Ձմեռ. հովանի:
12 Դշ. փյ. Պահք: 16
Լատ. Ծնունդ Տեառն:
13 Եշ. ճի. Պահք: Ս. Եւստրատիոսի, 17
Օքսենտիոսի, Եւգենիոսի, Որեստե-
ոէսի և Մարդարիոսի:
14 Ուր. ռյ. Պահք: Յերեկոյին նա- 18
խատօնակ:
15 Շբ. ռէ. Ս. Յակոբայ Մծբնայ հայ- 19

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Ն |
|---|---|---|
| | բագեանն, Մարուգէի Ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին, | |
| 16 | ✠ Կիր. բջ. Դ. Կիր. զկնի Յիսնակի: | 20 |
| 17 | Բշ. բէ. Ս. Հայրապետացն Իգնատիոսի, Ադդէի և Մարութայ եպիսկոպոսին: | 21 |
| 18 | Գշ. գզ. Սրբոց Թէոպոմպայ եպիսկոպոսին, Թէոնեայ վկ. և չորից զինուորացն Բասոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասիլիկեայ: | 22 |
| | Վր. քռ. լուս. Տէգ-տէգ չեռնո | |
| 19 | Դշ. դի. Պահք: | 23 |
| | Ըստ նոր տոմարի Տարեմուտ և յունուարի 1-ն 1912 թ. Կաթ. տօն Տնօրէնութեան Տեառն: | |
| 20 | Եշ. եթ. Ինդոսի, Դոմինի և Գդեբիկոսի, քահանային և երկուց Բերոցն, որք այրեցան եկեղ. Նիկոմիդացւոց. | 24 |
| 21 | Ուր. զէ. Պահք: | 25 |
| 22 | Շբ. ըժ. Ս. Բարսեղի հայրապետին և եղբօր նորին Գրիգորի | 26 |

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Ն |
|---|---|---|
| | Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետին և Սրբոյ Եփրեմի Խորին Ասորւոյ: | |
| 23 | ✠ Կիր. ժէ. Ե. Կիր. զկնի Յիսնակի: Յերեկոյին Նախատօնակ: | 27 |
| 24 | Բշ. բթ. Ս. Դաւթի մարգարէին և Յակովբայ առաքելոյն: Յերեկոյեան Նախատօնակ: Ոստ. Ճրագալոյց Ծննդեան: Լատ. Յայտնութեան տեառն: | 28 |
| 25 | Գշ. բժ. Ս. Ստեփաննոսի Նախավկային և առաջին մարտիրոսին: Հանդիսաւոր օր ուխտի Ս. Ստեփաննոս եկեղ. Տփխիսոյ որ ՚ի յանապատին կուսանաց, ուր է ամփոփեալ մասն նշխարաց—աջ Ս. Ստեփաննոսի Նախ. Յերեկ. Նախ. Ռուսաց՝ Ծնունդ Տեառն. | 29 |
| 26 | Դշ. գի. Պահք: Յերեկ. նախատօն. Ռուսաց՝ 2 օր Ծննդեան: Ծն. լս. Բեթլեհեմ | 30 |
| 27 | Եշ. գէ. Ս. Առաքելոյն Պետրոսի և Պօղոսի: Ռուսաց՝ 3 օր Ծննդեան: | 1 |

Օ ԴԵԿՏԵՄԲԵՐ Լ

28 Ուր. դչ. Պահք։ Յերեկ. Նախատ. 2
29 Շբ. դէ. Ս. որդւոյն Որոտման Յակովբայ առաքելոյն և Յովհաննու Աւետարանչին։ 3
Բարեկենդան՝ Ծննդեան պահոց։
31 Կիր. ահ. 1. օր Ծննդ. պահոց։ 4
31 Բշ աջ. 2 օր Ծննդ. պահոց։ 5

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը պակասել է 0 ժ. 37 ր.

ԴԵԿՏԵՄԲԵՐ.—Այծեղջիւրն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան թէև այնքան բախտաւոր չի լինիլ և ձախորդութիւններ շատ կ՛քաշէ, բայց ճշմարտասէր, թեթևամիտ, եռանդոտ, չար, աղահ և անբարիշտ կըլինի։ Իր մասին մեծ համարում ունի. թէև համեստ է երևում, սակայն դա միայն արտաքին կողմից է և կեղծ, որովհետև իր ամեն բաւականութեանց սիրահար է։

Իսկ ծնուած աղջիկը՝ արթուն, թեթևամիտ, ջահել ժամանակը վերին աստիճանի ամօթխած, սակայն վերջը համարձակ և շատ խառնակիչ, պակուած ժամ. Նաև նա խանդոտ՝ թէև այս պակասութիւնները միշտ աշխատում է ծածկել։ Եթէ չափաւոր և զգոյշ լինի մինչև խորին ծերութեանը կըհասնի։

Դեկտեմբերին ծնուածներն, առհասարակ իրենց գործերում խելօք են և խորհուրդների մէջ զգոյշ, սիրում են գիտութիւններ և միշտ հակուած են դէպի ճանապարհորդութիւն։ Առևտրից օգտուող, իսկ շինութիւններից վնասուող։ Պէտք է միայն 25 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանան։

## ՑԱՒԵԼՈՒԱԾ

## Մ. ՋՄՇԿԵԱՆԻ «ԾՈՑԻ-ՕՐԱՑՈՅՑԻ» 1912 Թ.

### I. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Հայրապետ և Կաթողիկոս ամենայն հայոց (Թափուր):

1) ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ—Սահակ Բ.
ԱՂԹԱՄԱՐԱՅ—(Թափուր)։

2) ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ — (Թափուր)։
Կ. ՊՈԼՍՈՅ—(Թափուր)։

—

3) Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՀՈԴ

Տեղապահ և Նախագահ Գէորգ արքեպ. Սուրէնեան:
» Յովսէփ արքեպ. Տ. Մովսիսեան

» Մեսրոպ եպ. Տ. Մովսիսեան:
» Սահակ վրդ. Ամատունի:
» Մատթէոս վրդ. Մաթէոսեան:
» Յուսիկ վրդ. Ջոհրաբեան:
» Բարգէն վրդ. Աղաւելեանց:
Պրոկուրոր Փ. Մելիք-Փարսադանեան

—

4) ԹԵՄԵՐ ԵՒ ԹԵՄԱԿԱԼՆԵՐ

ա) ԵՐԵՒԱՆԻ.—Փոխանորդ Թեմակալ առաջնորդի Խորէն եպ. Մուրադբէգեան:

բ) ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԷԹԻ.—Փոխ. Թեմ. առաջ. Եփրեմ վրդ. Սուքիասեան:

գ) ՂԱՐԱԲԱՂԻ.—Փոխան. Թեմ. առաջ. Զաւէն վրդ.

դ) ՀԱՇՏԱՐԽԱՆԻ.—Փոխանորդ Թեմ. առաջ. Մխիթար եպ. Տէր-Մկրտչեան:

ե) ՇԱՄԱԽՈՒ.—Առաջնորդ Թեմի Անանիա եպ. Համազասպեան:

---

զ) ԲԵՍԱՐԱԲԻՈՅ.—Առաջնորդ Թեմի, Ներսէս արքեպիսկ. Խուդաւերդեանց:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ.—Առաջնորդ Թեմի, Կարապետ եպ. Տ. Մկրտչեան:

է) ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, (Թափուր)

ը) ԵՒՐՈՊԱՅԻ.--Առաջնորդ Գէորգ Եպիսկ. Իւթիւճեան.—Նստում է Մարսէյլ քաղաքում, որտեղ և հայոց մատուռ կայ—Ս. Յարութիւն։ Բացի դրանից առանձին հովիւներ կան՝ Փարիզում, Մանչեստրում և Սուչօվայում։

ժ). ԱՄԵՐԻԿԱՅԻ.—Առաջնորդ Եղնիկ Եպ. Ապահունի։—Նստում է Ուսթր քաղաքում, որտեղ կայ հայոց եկեղեցի Ս. Փրկիչ։ Բացի առաջնորդից առանձին հովիւներ կան՝ Նիւ-Եօրկում, Բօստոնում, Պրօվիդէնսում, Լօրէնսում, Չիկագոյում և Ֆրեզնօյում։

—

Տաճկաստանի թեմերի մասին տեղեկութիւնները ուշանալու պատճառով անկարող եղանք այս անգամ տպագրելու։



# II. ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

## ԱՐԵՒԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ։

1911 թ. երկրագնդիս վրայ երկու անգամ միայն արեւի և լուսնի խաւարումներ կնկատուին. որոնցից,

1) Ապրիլի 3-ին Արեւի մանեկաձեւ խաւարում. սկիզբը՝ 6 ժ. 54 ր. երեկ. վերջը՝ 12 ժամ. 00 ր. երեկոյեան։

2) Սեպտ. 28-ին, արեւի լիակատար խաւարում. սկիզբը՝ 6 ժ. 53 ր. երեկ. վերջը՝ 2 ժ. 14 ր. գիշ.

3) Մարտի 19-ին լուսնի մասնաւոր խաւարում. սկիզբը՝ 5 ժ. 53 ր. գիշ. վերջը՝ 10 ժ. 33 ր. առաւօտեան։

4) Սեպտեմբ. 12-ին լուսնի մասնաւոր խաւարում. սկիզբը՝ 7 ժ. 15 ր. վերջը՝ 12 ժամին երեկոյեան։

Այս խաւարումներից Կովկասում նկատելի կլինի միայն լուսնի խաւարումները, այն էլ շատ մասնաւոր։

—

# III. ՕԴԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

—

## ԵՖԻՄԵՐԴՈՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ.

1912 թուականին Կշիռ կենդանակերպ համաստեղութեան ազդեցութեամբ մրգերի փչանալ է գուշակում, մարդկանց սպառնացող հարուած և պատերազմ. սակայն մետաքսը, ձէթը, գինին և պտուղները կլինին առատ:

Եղանակը—ձմեռն՝ սկզբումը ցուրտ կարկտով և վերջը բարեհաճոյ: Գարունն մինչև յունիս ամիսն ցուրտ, անձրևներ կարկտով. տեղ տեղ չորութիւն: Եւ հրային կենդանակերպում Երեւակ մոլորակի Լուսնթագի հետ կցորդուիլը, Հրատի երկնքի առաջին տան գտնուիլն ու Լուսնի Լուսնթագին մօտենալն գուշակում է կռիւներ, մեծ վնասներ ծնելու, տկարութին հրկի-



ղութիւն, կրօնի և կրօնաւորների մէջ պղտորութիւն, ամբոխի մէջ տարաձայնութիւն, ուրախ բնաւորութիւն ունեցող անձանց և նշանաւոր տիկնանց մահ: Բացի այդ ռամիկների մէջ տաքութիւնից և խոնաւութիւնից առաջացած գլխացաւ և այլ հիւանդութիւններ: Ըստ Դեմոկրատէսի էլ, այս տարուայ գինին լաւ և գիմացկուն կլինի. պարտեզները պճնելու և հաղողի որթերի ջրերը յաջողակ: Մորեխը կռաց և պատերազմ կլինի: Եւ որովհետև Ֆրանսիան լուսնթագի իշխողութեան տակ է գտնուելու, այդ պատճառով վտանգների է ենթարկվելու և մեծ վնասներ կրելու: Իշխանների մէջ ատելութիւն և իրանց իշխանութեանց փոփոխութիւն: Տեղի կունենայ մեծ արիւնհեղութիւն և պատերազմ: Թագաւորներն ու իշխանները իրար դէմ

Վերթան նաամիկ ժողովուրդը կամրոխի։

Իսկ տանը տէրի Զաւկն լինելը գուշակում է գարնան միջակ և անձրևային լինելը գետերի վարարումով և ծովերի ալեկոծութիւններով։ Ամառն եօ անձրևային։ Աշունքն անձրևով և ձիւնոտ. Ձմեռն հարաւից փչող քամիներով։ Հունձն լաւ, ցորենի և այլ պըտուղների առատութիւն, մանաւանդ լեռնոտ տեղերում։ Եւ ինչ որ ցանուի, Ս. Խաչ ամսին (Սեպտեմբեր) լաւ բերք կտայ. սակայն մեղր սակաւ։

Պարսից երկրին մարեխն ու թրթուրը կապականի։ Մինչև ձմռան միջի ամսի 15-ն մանուկներին մահ է սպառնում։

Աղբերը խրար կխառնուեն և մեծամեծներ կմեռնեն։ Տեղ տեղ պատերազմներ։ Արևելքում խաղաղութիւն, սակայն Հռովմայեցւոց երկրներում արիւնհեղութիւններ։



# IV. ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ

## ԱՖՕՐԻԶՄՆԵՐ

Կարդա ու սովորիր որ մարդ դառնաս։

—Գիտութիւնը կարճեցնում է շատ անցնող մեր կեանքի դառը փորձերը։

—Քիչ հաւատալով ապագային, ներկայով օգտուիր։

—Օր առաջ ցանիր, որ շաբաթ առաջ հնձես։

—Խելօք մարդու մի օրը, յիմարի մի տարուց աւելի թանկ է։

—Ասա ինձ ինչով էիր զբաղուած ամբողջ օրը, որ ես ճիշտն ասեմ ստացած օգուտդ։

—Չենք պահպանում ինչ որ ունենք, կորցրածներս ափսոսում ենք։

—Ահով և յուսով է մարդ ամեն բանի համոզվում։

—Ով իր մխիթարանքը կարողանում

է հանգիստ սրտով տանել և վրէժ-խնդիր չի լինում, կեանքի յաղթանակը նա է տանում։

—Եօթն իմաստուն խորհուրդներից աւելի գերազանց է, փորձով կատարուած հետևանքը։

—Եթէ մարդիկ կարողանային իրանց ապագան գուշակել, նրանցից շատերը բոլորովին չէին կամենայ ապրել։

—Այնքան նշանակութիւն չունի թէ ինչպէս ես դու ծնուել, այլ այն թէ ինչպէս ես մեռնելու։

—Ուրախութիւնն է որ ստիպում է մեզ սիրել կեանքը, իսկ կեանքի սէ-րը, հենց ինքը առողջութիւնն է։

—Տխրութիւնն ու յուսահատութիւնն են նպաստում անժամանակ ծերութեան։

—Սև ու նախանձոտ սիրտն է որ շնորհակալութիւն չգիտէ։

—



## ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

—Անդնդախոր ծովը մարդուն այնքան չի խափում, որքան կնոջ խօսքը։

—Կինը ինչպէս մի կրակ հեռուից փայլում է և տաքացնում, իսկ երբ մօտենում ես նրան՝ այրում։

—Կանայք առանց սովորելու ամեն բան գիտեն։

—Մի օրն է լաթէ կտորի համար ի՞նչ չի անի թեթևամիտ կինը։

—Կնոջ լացը յաճախ սատանի ծիծաղ համարելու է։

—Օտար կնոջ հետ մտերմութիւնը շատերին մեղմ է թւում, բայց վերջաւորութիւնը՝ միշտ դառը լեղի։

—Գեղեցիկ կինը միմիայն աչքի համար է դրախտ, իսկ սրտին դժոխք և քսակին՝ քաւարան։

—Կանանց մեծ մասը կռուի բնաւորութիւն ունի, դուրդուրես գիրկդ կընկնի, դիպչես՝ ճանկով կտայ։

## V. ԲԺՇԿԱԿԱՆ

Կայծակի խփածին մինչև բժշկի գալը հորիզոնաձև պառկացնելուց յետոյ սառը ջուր ածել, նաշատրի ոգի (սպիրտ) հոտ քաշել տալ և աշխատել արհեստական շնչառութիւն առաջ բերել։

Իսկ այսպիսի դէպքերում հասարակ ժողովուրդը շատ տեղերում կայծակ խփածին անմիջապէս երեսը միայն բաց թողնելով, մինչև վիզը թաղում են խոնաւ աւազում կամ հողի մէջ։

—

### ՆՈՐ ՄԻՋՈՑ ԹՈՔԱԽՏԻ ԴԷՄ

«Times» թերթը հաղորդում է մի գիւտի մասին, որը տանջվող մարդկութեան համար աւելի մեծ նշանակութիւն կարող է ունենալ, քան Կոխի գիւտը։



Թոքախտի դէմ կռուող միջազգային ընկերութեան առաջ Բերնհէյմը կարդաց Թոքախտի բժշկութեան գործում այն հրաշալի հետևանքների մասին, որպիսիք ստացւում են ռադիօակտիվ ֆ. Նուօլօիտոնի գործածութիւնից։

Այդ միջոցը գտել է բժիշկ Շէնդէֆին Բուդապեշտում. երեք տարվայ ընթացքում այդ միջոցով փորձեր են կատարել մասնագէտների ձեռքով, իրարից անկախ։

Նրա բաղադրութիւնը հետևեալն է. մարսոնացրած (пептонизированный) իօդին՝ 0,75, մէնտօլ՝ 0,06, խլօրային ռադիի-բարիի մի կաթիլի մի տասնորդականը էֆիրի խառնուրդի հետ։

Բժիշկ Շէնդէֆին վաղուց է սկսել թոքախտի բժշկութեան համար իօդինի ներսրսկումն։ Բերնհէյմը հաղորդեց իրան յայտնի 75 դէպքերի մա-

ախնս: Նրանց մէջ կան ոսկրների ուկոկորդի տուբէրկուլեօզ ունեցողներ, որոնք սովորաբար անբուժելի էին համարվում: Ռադիոակտիվ իօդինի շնորհիւ նրանք կազդուրվել են և այժմս գրաղված են իրանց սովորական աշխատանքով:

Ջեկուցումից երևում է, որ Շէնդլէֆին թոքախտ բուժելու համար գտել է ամենալաւ միջոցը. Նրա գտած միջոցը իրօֆ որ կատարեալ հակաթոյն այդ ահռելի հիւանդութեան դէմ:

—

ՄԱՆՈՒՇԱԿԸ ՈՐՊԷՍ ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՂ

Որ քաղցկեղը (ռակը) բժշկական աշխարհում համարել է անբուժելի մի ակարութիւն և այդ ակարութեան դէմ գործադրուած բժշկականմիջոցները ցայսօր ոչ մի բարեբար հետևանք չեն



տուել, այդ ապացոյցի կարօտ չէ. բայց թէ մանուշակը (фіалка), մեր դաշտերի այդ քնքոյշ ծաղիկը և համեստութեան խորհրդանշանը, որ այսուհետև պատկառելի տեղ է գրաւելու բժշկական գեղօրայքի մէջ՝ քաղցկեղ հիւանդութիւնը բժշկելու համար, դա էլ աններև է և կասկածից դուրս:

Ահա մեր գիտողութիւնից մի թարմ դէպք, որ գալիս է ապացուցանելու անգլիական բժշկական «The Tancet» մեծ հանդէսի հաղորդած լուրի ճշտութիւնը քաղցկեղը մանուշակի ծաղկի տերևներով բժշկելու վերաբերմամբ.

Եկատերինոդարում շատ տարիներից ի վեր ապրում է Հին-Նախիջևանի գաւառի Կզնութ գիւղացի Յարութիւն Ստեփաննեանը, որ «Նիւ-Յօրք» հիւրանոցի պահողներից մէկն է: Անցեալ տարի յուլիս ամսից սկսած Ստեփա-

նեանը ստամոքսի մէջ թեթեւ ցաւեր է զգում, որ գնալով խստանում է, իսկ հոկտեմբերին մտնում է անկողին այլ եւս չվերկենալու անյուսութեամբ, ա-ռովհես և 5—6 հոգուց բաղկացած բը-ժշկական խորհուրդը (կոնսիլիում) հաստատում է ստամոքսի քաղցկեղ, ուստի առաջարկում է հիւանդին Մոս-կւա տանել անդամահատելու, այսին-քըն դէպի մահ. բայց հիւանդի ծանր դրութիւնը արգելք է դառնում նրան Մոսկւա տանելու. Գործ է դրւում ա-մեն միջոց, բայց իզուր։

Վերջապէս մի պարոնի խորհրդով դիմում են մի մարդու, որը նոյնպէս տարիներ առաջ այդպիսի հիւանդու-թեամբ բռնուած լինելով՝ բժշկւել է։ Այդ մարդը տալիս է բաւականաչափ մանուշակի չորացրած ծաղկի տերե-ներ, խորհուրդ տալով մի փոքր քա-



նակութեամբ չվերցնել այդ տերեւնե-րից և թէյի ամանի մէջ դցելով վըէն եռացրած ջուր բաց թողնել ու խմել օրական երեք գաւաթ (րիւմկա)։ Մէկ և կէս ամիս մանուշակի չորացրած տերեւների եփած ջրի հիւթը գործ ա-ծելով՝ ստամոքսի հիւանդութեամբ տա-ռապող Յարութիւն Ստեփանեանը այժմ բոլորովին ողջ ու առողջ՝ ուտում-խը-մում, ման է գալիս իր համար։

Ա. Մելիք-Գիլնազարեան

Եկատերինոդար, 13 փետրւարի

«Սուրհանդակ»

## VI. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

### ԲԺՇԿԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Մի նշանաւոր բժիշկ իր մահուանից յետոյ թողեց մի կնքած ծրար հետեւեալ մակագրութեամբ. «Խորին ծերութեան հասնելու գաղտնիքը». Միմիայն տալ այն մարդուն, որ ամէնքից աւելի նուիրաբերութիւն կանի խեղճերի համար ճի հիւանդանոցին»:

Ծրարը ընկաւ մի հարուստի, որը հիւանդանոց մտցրեց բաւական մեծ գումար. Ծրարի մէջ գտնուեց մի փոքր թուղթ, որի վրայ գրուած էր.

«Մի խմիր, մի ծխիր, շատ կուշտ մի ուտիր, օրը մի սաժէն փայտ կոտրիր, չոր տախտակի վրայ քնիր, օգնիր խեղճերին եւ դու կ'ապրես մինչեւ մահուանդ վերջը»:

—



### ՎԵԳԵՏԱՐԵԱՆՆԵՐԻ ՀԱՒԱՏՈՑ ՀԱՆԳԱՆԱԿԸ

1. Մի շինիր փորդ կենդանիների գերեզման.

2. Մի գործիր որպէս մասնագէտ դագաղ շինող:

8. Մի նմանիր շներին, գայլերին եւ մարդագայլերին:

4. Դու միայն հովիւ ես երկրիս վրայ Ամենաբարձեալ ստեղծող Արարչի կալուածքում:

5. Դու իրաւունք չունիս ոչնչացնել Արարչի ստեղծած արարածներին:

6. Ինչպէս կարող ես դու լինել առողջ, խելօք եւ երկար ապրել, երբ քո մարմնի մէջ թաղուած են ամեն տեսակ կենդանիներ եւ թռչուններ:

# VII. ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

## ԿԵԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԸՆԴՀԱՏՈՒՄՆ

Ժընևի յայտնի ուսուցչապետ ֆիզի-կոս Ռաուլ Պիխտէն լուծել է մի մեծ խնդիր, թէ ինչպէս կարելի է ժամա-նակաւորապէս ընդհատել կենդանի օրգանիզմների կեանքն ու ապա նրանց նորից կենդանացնել։ Նա այդ բանի համար աշխատել է 18 տարի։

Չափազանց իջեցրած ջերմութիւնը, որը հասնում է սառեցման աստիճա-նին, թոյլ է տալիս կարճելու կենսա-կան գործունէութիւնը, բայց միենոյն ժամանակ չէ քայքայում վերջնակա-նապէս։ Այդպիսի փորձեր ես կատա-րում եմ ձկների վրա,—ասում է Ռաուլ Պիխտէն։

Ես վերցրի 28 ձկներ. կանխապէս պահեցի նրանց 0° ջերմութիւն ունե-ցող ջրի մէջ, ապա աստիճանաբար ի-



ջեցնելով ջերմութիւնը՝ ես սառցրի թէ ջուրը և թէ ձկները, որոնց կարե-լի էր կոտրել մանր մասերի։ «Մի ամ-սից յետոյ ես սկսեցի աստիճանաբար բարձրացնել ջերմութիւնը, և ձկները հետզհետէ վերակենդանանալով սկը-սեցին լողալ, կարծես նրանց հետ ոչ մի անախորժ բան պատահած չը լինէր։

«Ես նկատեցի որ ծածանները չեն կարողանում տանել՝ 20°-ից աւելի ցուրտ, գորտերն ապրում են՝ 28° ցըր-տին, սողկերը (сколопендра) տանում են՝ 50° ցուրտը, խխունջները մի քա-նի օր ապրում են նոյն իսկ՝ 110°, 120° ցրտի տակ։ Շունը 1½ ժամ կարողա-նում է տանել 110° ցուրտը»։

Կարծում ենք՝ նոյնպէս ջերմութեան բացակայութիւնից է առաջ գալիս սո-ղունների ձմրան քունը կամ կեանքի ժամանակաւոր ընդհատումը, և սառած մարդկանց վերջնականապէս մեռած լինելը անշուշտ պէտք է ունենայ և սխալմունքներ։

# VIII. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Որպէս զի բանջարանոցի ընդեղէնները առատ լինին և շուտ աճեն օգտակար է այնպիսի ջրով ջրել, որի մէջ միսը լուացել են։ Այսպիսի ջուր կարելի է հաւաքել մի քանի օրուայ ընթացքում։ Եւ անպատճառ պէտք է առաւօտները ջրել, որ ամբողջ օրուայ ընթացքում արևի տակ սկսուի բաղադրուել։

Ջրելու է շատ քիչ ևել ևսանց. իսկ մինչև երեկոյ ուրիշ մաքուր ջրով ևս ջրել։

—

Ջրալի կարտօֆները մաքուր և համեղ դարձնելու համար, խորհուրդ են տալիս մի քանի օրով փառարանի մօտ փռել։ Այսպիսով աւելորդ խոնաւութիւնը ցնդուելով—չորանալով կարտօֆները մաքուր և համեղ են լինում։

—



## ՏԼՋԱՐԵԼԱԿԱՆ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ներքին գործերի մինիստրը շրջաբերականով տեղեկացրել է բոլոր նահանգապետներին, որ տեղական իշխանութիւնները իրաւունք ունին գրաւելու և ծախելու չվճարուած տուրքերի փոխարէն միայն գիւղացու աւելորդ տնտեսութիւնը։ Իսկ այն տնտեսութիւնը, որ բաղկացած է մի ձիուց, մի կովից, մի խոզից, հինգ ոչխարից, թռչուններից, գիւղատնտեսական գործիքներից և հացից, չվճարուած տուրքերի փոխարէն չպէտք է գրաւել և ծախել։

«Մուրհանդակ» № 214, 1911 թ.

—

Պտղատու ծառերին պարարտացնելու համար սպիտակեղէնները լուանալուց յետոյ մնացած սապնաջուրը բոյսերը ջրելուց և այն օգուտն ունի, որ այդ սապնաջուրը սպանում է բոյսերի վրայ գտնուած վնասակար մանրէները և հողի որդերը, ազատում հիւանդութիւններից։

# IX. ՏԱՆՏԻԿԻՆ

## ՃՐԵԱՆ ԲԾԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԱՆՀԵՏԱՑՆԵԼ

Այսպիսի բծերը հանելիս ոչ մի դէպքում սապոն գործածելու չէ։ Կեղտոտ սպիտակեղէնները դնում են գոլ (քիչ տաք) ջրում, որի մէջ աւելացնում են մի թէյի գդալ գինեքարի թթւուտ (ВИННОКАМЕННОЙ КИСЛОТЫ)։ Սպիտակեղէնները մի փոքր ժամանակ այդպիսի ջրում թողնելով, թրջելով լաւ տրորում, որից յետոյ սառը ջրում միանգամ նաև լաւ լուանալուց բոլոր բծերը մաքրվում անհետանում են։

—

Ռուսական բլինի պատրաստելու համար. պէտք է չորս բաժակ ցորենի ալիւրը, երեք բաժակ տաք



կաթի հետ խառնել, մէջը երկու լոտ դրած խառնել և տաք տեղ դնել։ Երբ որ խմորը հասաւ, վրան քիչ քիչ աւելացնելու է մի բաժակ եռացրած կաթը, հինգ ձուի դեղնուց, երկու գդալ հալած եղ, ձուաներից մնացած սպիտակուցը (առանձին հարած) և քիչ էլ աղ, որից յետոյ թասի մէջ փռել և թաւին իւղ քսելուց յետոյ կրակին դնել։

—

# X. ԳԻՒՏ

## ԷԴԻՍՍՈՆԻ ՄԻ ՆՈՐ ԳԻՒՏ

1911 թ. ամառը Լիվերպուլ եկաւ Էդիսոնն իր ընտանիքով, որպեսզի այցելելու ուղևորուի, ծովի վրայով դէպի Անգլիա և Իռլանդիա։

Ինքնին հասկանալի է, որ հանճարեղ Էդիսոնը չէր կարող աննկատելի կերպով անցնել Լիվերպուլով։ Բազմաթիւ թերթերի աշխատակիցներ ներկայացան նրան զանազան հարցումներով, թէ նա ինչ է արել վերջին ժամանակներս և ինչ գիւտ է յայտնելու մօտիկ ապագայում մարդկութեան։

Էդիսոնը «Temps» թերթի աշխատակցի հետ խօսելիս, ի միջի այլոց, ասաց, որ ինքը կատարելագործել է աւտոմոբիլներն (վարըաշարժ), շոգե-



գնացքների և նաւերի՝ էլեկտրահաւաք գործիքը (ակկումուլեատոր)։

Հին էլեկտրահաւաք գործիքների արճիճը և ծծմբային թթւուտը փոխարինուած է նիկելով և ածխաթթւուտային կալիումով։ Շնորհիւ այս փոփոխութիւնների շարժիչ գործիքները շատ են թեթևացել, որի պատճառով և կրճատուել էներգիայի ծախսը։ 150 վերստ տարածութիւն անելու համար կը հարկաւորի միայն 49 կոպէկ։

Բացի դրանից նա կատարելագործել է կինեմատոգրաֆը այնպէս, որ նա կատարում է շարժումներ և հանում է ձայներ առանց գրամոֆոնի։

Էդիսոնը այս նոր ապարատը անուանել է «անեֆոնոգրաֆ»։

# XI. ԱՐՈՒԵՍՏ

Որպէս զի կաշուէ ոտնամանները աւելի երկար դիմանան, վաքսով մաքրելու չէ, որի բաղադրութեան մէջ վնասակար նիւթեր կան։ Ամենից լաւ է կօշիկները վազելինի կամ խոզի ճարպում խառնած ու լաւ հարած ծխնելոյզի մրուրով օծել։

Միմլյանդամ կօշիկների տակի կաշին նաև օգտակար է օծել ճարպով։

—



# XII ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՄԻԼԻՈՆԱՏԷՐ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԻՋՈՑ

Նիւ-Եորքում հրատարակւող իտալական «Araldo Italiano» լրագիրը Չատկին ամերիկացի միլիարդէրներից կազմել էր մի անկետ այն հարցի մասին, թէ ինչպէս և ի՞նչ ճանապարհով կարելի է միլիօններ դիզել։

Չարլզ Ռոսս, որ հարիւրաւոր միլիոնների տէր է, գրում է. «Միլիոններ դիզելը բացառապէս կախւած է նրանից, թէ ինչպէս իրձգտեն նրանց։ Դաշտը որքան շատ ցանւած լինի, այնքան բերքը առատ կըլինի։ Աշխատանք, աղնուութիւն, խնայողութիւն և շիտակութիւն—ահա առաքինութիւններ, որոնք կարող են հարստութեան հիմք ծառայել։ Պարտքով առևտուր անելը

և շատ մարդկանց գործակցութիւնը ընդհանրապէս վնասակար է լինում առևտրական գործում։ Գնիր, վաճառիր արագ և բաւականացիր ամենաքիչ օգուտով — այդ բոլորը անշեղ կերպով կը տանի քեզ դէպի, քո նպատակը»։

Նոյն հարցի մասին ահա թէ ինչ է գրում միլիարդատէր Հանտինկտոն. «Ոչ մի անգամ ոչ ոքի առաջուց մի պատմիր քո ծրագիրների մասին։ Սակայն ի նկատի ունեցիր, որ քաղաքականութիւնը բոլոր գործնական բանակցութիւնների մէջ անպայման և անհրաժեշտ բան է։ Մի ուրե է գործ սկսելու ժամանակ միշտ մտածիր այդ գործի բոլոր տեսակների մասին, բայց երբ վճռեցիր, այն ժամանակ արդէն պատրաստ եղիր եռանդուն և անխոնջ կերպով ձգտել դէպի քո նպատակը»։



Դրա մէջ է յաջողութեան ամբողջ գրաւականը»։

Սեղանատէր Ռասսել ասում է. «Միլիոններ ձեռք բերելու յաջողութեան հասնելու համար, մարդ պիտի լինի ազնիւ, աշխատասէր և, որ գլխաւորն է, խիստ պէտք է պահպանէ խնայողութեան սկզբունքը»։

—

## ԽՈՍՈՂ ՄԵՌԵԱԼԸ

Ֆիլադէլֆիայում վերջերս կատարուեց մի բացառիկ դէպք բժշկական պրակտիկայի մէջ, որ իր վրա դարձրեց հանուր գիտական աշխարհի ուշադրութիւնը։ Այդ քաղաքում յայտնի ինժիներ Թէօլոր Բելէյ իր մահից յետոյ խօսեց 30 րոպէ։ Տեղի ունեցաւ այդ հետևեալ կերպով։

Կոյր աղիքի հիւանդութեան ուժեղ

ցաւերից յետոյ, Բելէյին ենթարկեցին անդամահատութեան, որ արդէն ուշ էր, և անդամահատելուց մի քանի ժամ յետոյ նա մեռաւ, շրջապատուած իր ընտանիքով։ Մահվան ջղաձգութեան րոպէին ներկայ եղող 3 բժիշկները հաստատեցին մահը. դարկերակը, սիրտը դադարեցին բաբախելուց, աչքերը կիսով փակվեցին, և, վերջապէս, մեռնողը սառեց։ Երբ բժիշկները հեռացան, մի քանի րոպէ յետոյ կինը լսեց, որ իր մեռած ամուսինը ինչ-որ փնթփնթում է, իսկ յետոյ արդէն սկսեց խօսել։ Խօսեց 30 րոպէի չափ, անելով կնոջն իր վերջին կարգադրութիւններն։ Բելէյը խորհուրդ տուեց կնոջը ծախել մնացած կալուածքը, ցոյց տուեց, թէ ինչ գնով պէտք է վաճառել, և յայտնեց նաև իր կարծիքը իր միակ աղջկայ դաստիարակու-



թեան վերաբերութեամբ։ Յետոյ նրա ձայնը լռեց։ Երբ նա այլևս չկարողացաւ մի բառ անգամ արտասանել, նա ձեռքով նշան արեց, և նրան տուին թուղթ ու մատիտ, և նա գրեց դարձեալ մի քանի անորոշ խօսքեր։ Դրանից յետոյ անշունչ դիակը կորցրեց գիտակցութեան վերջին մնացորդները։

Գիտնական մարդաբանները և հոգեբանները, ծանօթանալով այդ դէպքի հետ, բացատրում են այդ նրանով, որ մեռած Բելէյի գիտակցութիւնը շարունակեց գործել և ֆիզիոլոգիական մահից յետոյ։

Այս դեռ առաջին դէպքն է բժշկական պրակտիկայում.

# XIII. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

## ԹԻՖԼԻՍԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

Վիճակագրական բիւրօյի կառավարիչ Իշխան Գ. Արղութինսկին քաղաքային առաջիկայ ընտրութիւնների համար կազմել է Թիֆլիս քաղաքի ազգաբնակութեան մարդահամարը ըստ ցեղային կազմի։ Թիֆլիսի բոլոր 12 քաղաքամասերի մէջ ապրում են ընդամենը 305,207 հոգի երկու սեռի։ Այդ 305,207 բնակիչները, ըստ ազգութեան, հետեւեալ կերպով են բաժանված.

1) Ռուսներ՝ 67,086 կամ 22 $^{0}/_{0}$, 2) Վրացիներ՝ 54,120 կամ 17,7 $^{0}/_{0}$, 3) Հայեր՝ 124,901 կամ 40,9 $^{0}/_{0}$, 4) ուրիշ ազգութիւններ՝ 59,100 կամ 19,4 $^{0}/_{0}$։

—

# XIV. ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

## ՈՒՂԵՐՁ *)

Շիրվան-Շամախու ինքդ ծնունդիս,
Մեր խիղճ հայերուս ցօլխալ գրողնիս.
Ղուրթ է Ալեքսանդր Դուն Մովսեսօղլիս,
Համայ միր դօզալ Շիրվանզադէնիս։

Խօր քու տօնն է տօնում հայ խալխը,
Քու քառասուն տարուայ քաշած ամակը.
Դիփունքն իմս ցան դալմիդ արարէ,
Ամէն տեղեմէն տալխին գովքը։

---

*) Այս ուղերձը դերասան Տէր-Դաւթեանը Թիֆլիզեցու տարազով հագնուած յօբելեանական հանդիսին կարդաց արտասանելով Թիֆլիզու բարբառով հետեւեալ խօսքերը. «Հնուց իմ Ննդիր Խարվուխեցի Զիմիշկօյլինց Մակարը էս թուղթն է գրի թէ Նազօր ջա

Չէր դուն ջոհիլ իս, շատ տարիք ապրիս,
Նուր գրիր ջէր շատ հանիս ու տպիս.
«Նամուսիդ» նման մաղալու գրերով,
Տառերու կօրած նամուսը հիդ բերիս։

Վուր ջահիլնիրն էլ մայինցխիլքի գան,
Խիղճն ու հարսասը իրար հասկանան.
Էս շառը վուխտը աշխարքը դնջանայ,
Ռանչպրի դառն օրն էլ քիչ թեթիանայ.

---

կօսէ, Կրծանիս իմ չլա նստած, էկող տարուայ Օրացուցիս ռամն իմ դուրս բերում. Տիրվան աղիս տոնին չիմ կանա հասնի, թէ ախպէրիս կօսէ, էս իմ ղաթարս իրան փեշքաշ արա իմ կուղմէն, իր տոնը շնորքէ ու իր պատուին էս իմ գրած վուտանաւուրը քտի մէ լաղաթին կարթայ։



Խունուճ մազերով պատկիրդ նիշած,
Էս իմ անեցած դաւթրումս տըպած.
Ընդունէ խնթրիմ ինձմէն յիշատակ,
Լօթիանայ վունցօր սրտիմէս փէշքաշ։

Շնորքումիմ տօնդ էլ, էս թայիզուլովը,
Կրծանիսմէն փեսիս բաղեմէն.
Ինձ հետ ձէն տուէք մէ բերան դուք էլ*)
Կեցցէ ու կեցցէ Տինվանդաղ-Ագէն։

Մ. Զմշկեան

21-ին մայիսի 1911 թ.
Կրծանիս։

---

*) Դիմելով ժողովրդին։

# XV. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## † ՊԵՏՐՈՍ ՍԻՄԷՈՆԵԱՆ

—

1911 թ. Յունվարի 19-ին, երեկոյեան ժամը 5-ին, Թիֆլիսում վախճանվեց «Մեղու Հայաստանի» նախկին լրագրի խմբագիր-հրատարակիչ, հայ հրապարակախօս և հասարակական գործիչ Պետրոս Սիմէոնեան, 83 տարեկան հասակում։

Հանգուցեալը, իբրև ազգային և հասարակական գործիչ, իբրև գրող և հրապարակախօս վաղուց արդէն քաշվել էր ասպարէզից և թէև երբեմն վերջերս մի միայն «Հովիւ» շաբաթաթերթում էր լոյս տեսնում նրա խելացի ու հեռատես յօդուածները։ Սակայն նա երկար և ձիգ տարիներ հանդիսացաւ հայ մտաւոր և գրական աշխար-



հում յայտնի ներկայացուցիչ, ղեկավար և պարագլուխ ազգային-պահպանողական ուղղութեան իր «Մեղու Հայաստանի» պահպանողական թերթով, որ, անշուշտ, որոշ տեղ պէտք է գրաւէ հայ մամուլի պատմութեան էջերում։ Նա համոզված և մոլեռանդութեան հասնող պահպանողական էր և շովինիստութեան հասնող ազգասէր, և նա կրթեց այդ ուղղութեամբ ամբողջ սերունդներ՝ թէ իբրև խմբագիր իր «Մեղու Հայաստանի» թերթով, թէ իբրև ուսուցիչ և ղեկավար երկար տարիների ընթացքում Ներսիսեան ազգային դպրոցի։ Նա երկար տարիներ յամառ և տոկուն կռիւ մղեց Գրիգոր Արծրունու դէմ, նրա հիմնած «Մշակ» լրագրի դէմ և առհասարակ բոլոր այն նոր, առաջադէմ ուղղութեան դէմ, որ ձգտում էր բոլորովին ընդարձակ ժողովա-

կան կեանք և հոսանք մտցնել հայ-կական աւանդական և պահպանողա-կան կեանքի մէջ: Պէտք է ասել սա-կայն, որ Պետրոս Սիմէոնեան սկզբում տեղ էր տալիս ուրախութեամբ թարմ, առաջադէմ ոյժերին. այսպէս օրինակ, առաջադիմական բանակի գործիչնե-րից շատերը, ինքն Գրիգոր Արծրունին, աշխատակցում էին «Մեղու Հայաստա-նի» մէջ: Սակայն, երբ այդ թեր-թը աւելի որոշակի և յայտնի կեր-պով պարզեց իր դրօշակը և իբրև դէ-մից ընդունեց այն սկզբունքը՝ «թէ արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք փրկութիւն», ընդունելով եկեղե-ցին միակ ֆակտոր ազգային ինքնու-րոյնութեան և հոգեոր-մտաւոր-բարո-յական անկախութեան, այդ ժամանակ միայն առաջադիմականները հեռացան:

Եւ սակայն, ի պատիւ Նորա հան-



գուցեալ Պետրոս Սիմէոնեանի, որի մահ-վամբ կարելի է ասել անհետանում է «Մեղուական» սերնդութեան վերջինը, պէտք է արձանագրել, որ նա եղաւ համոզուած գործիչ, և մանաւանդ պէտք է ընդգծել նրա բարոյական մի մեծ արժանիքը—անշահախնդրութիւնը: Նա, չը նայելով որ ինքն միջոցների տէր չէր, բայց իր ունեցած սուղ միջոցները եւ բաժանում էր իր կարօտ ընկերնե-րի հետ, օգնում էր շատերին, իրանց դիմողներին, և զարմանալի ժուժկալ և սակաւապէտ կեանք էր վարում.

(Մշ.)

—

## ՊԵՏՐՈՍ ՍԻՄԷՈՆԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Կիրակի, յունվարի 30-ին, տեղի ու-նեցաւ Պետրոս Սիմէոնեանցի թաղու-մը, որին ներկայ էին հասարակութեան խուռն բազմութիւն, ազգային և կըր-

Թական զանազան հաստատութիւննե-րի ներկայացուցիչներ և պատգամա-ւորներ բոլոր հայ և օտար մամուլի ներկայացուցիչներից։

Հանգուցեալի կտակով յայտնած ցան-կութեան համաձայն, պսակներ չէին դրված և թաղման ու յուղարկաւորու-թեան կարգը կատարուել էր միայն մի քահանայ. Մնացած հոգևորականութիւ-նը մասնակցում էր իբրև հանդիսական։

Այդ օրը հրատարակվել էր հանգու-ցեալի աշխատակից «Մեղու Հայաստա-նի» նախկին թերթի մի համարը, որի մէջ զետեղված էին Պետրոս Սիմէո-նեանցի վերջին առաջնորդող յօդուածը տպված «Մեղուի» 1886 թ. վերջին № 53-ում և նախկին աշխատակիցների՝ բժ. Լ. Տիգրանեանի Գէորգ Բարխուդա-րեանի, Միքայէլ Սալաբէգեանի, Ալ. Քիշմիշեանի, Բալեցու Միք. Սուլեանի,



Եղիշէ Ք. Գեղամեանի, Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեանի, Մարիամ Մառինեան-ցի, Մալ. Զմշկեանի յօդուածները։ Իսկ այժմեան հայ գրողներից յօդուածներ տպել են բժ. Բ. Նաւասարդեան, Տ. Նազարեան, Սալ-Ման։ Այդ համարի մէջ տպված են և ստացուած ցաւակցական հեռագիրներն ու նամակները։

Այդ օրուայ հրատարակված «Հովիտ» շաբաթաթերթի համարը նաև, ամ-բողջովին նուիրված էր Պետրոս Սիմէո-նեանցի յիշատակին։

Եկեղեցում դամբանական խօսեց Էջ-միածնից եկած Բենիկ վարդապետը իր սովորական պերճախօսութեամբ։

Հանգուցեալի մարմինը ամփոփվեց Վանքի եկեղեցու բակում, Մկրտիչ Սա-նասարեանցի դամբարանի կողքին։

---

# XVI. ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

## ա) ԳՆԵՐԸ *)

| | II դ. | III դ. |
|---|---|---|
| Թիֆ. ուղ. Մոսկուա | 24—40 | 15 ր. |
| » » Ս. Պետերբ. | 27 ր. » | 18 » |
| » » Վարշաւ | 26 » » | 18 » |
| » » Պոդվոլոչիսկ | 25 » » | 17 40 կ. |
| » » Ալէքսանդրոպոլ | 28 » » | 18 50 « |
| » » Վլադիվոստ. | | |
| » » Ռոստով (Դոնի) | | 13—70 |
| Վլադիկաւկազ. Պետեր. | » » | 14 40 կ. |
| Պետերբուրգից Պարիզ | 60 » | 37 35 կ. |
| Մոսկուայից Պարիզ . | 68 „ | 38 » » |
| Բաքուից Կիսլաւոդսկ | 12 80 | » » » |
| Բաթ.—Բաքու միջա-ժամեն . . | 11 ր. 10 կ. | 7 ր. 40 կ. |
| Թիֆ.—Գորի . | 1 » 53 » | 1 » 2 » |
| « Միխայ. | 2 » 43 » | 1 » 62 » |
| » Քութա. | 4 » 8 » | 2 » 72 » |
| » Փոթի | 5 » 21 » | 3 » 47 « |
| » Բաթում | 6 » — » | 4 » — » |

*) Վերջերս հարիւրին 10% այս գներին աւելացրած է.



# ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱ-ՊԱՐՀՆԵՐԸ

## ՍԱՐԱՂԱՄԻՇԻՑ—ՍԻՎԱՍ (723 վ.)

| | | |
|---|---|---|
| Ղարաղուրղան . . . . | 34 | „ |
| Զիվին . . . . . | 6 | „ |
| Զանջակ . . . . . | 17 | „ |
| Արդոս . . . . . | 5 | „ |
| Քէօփրիքէօյ . . . . | 24 | „ |
| Հասան-Ղալա . . . . | 13 | „ |
| Ղուրջուլու . . . . . | 17 | „ |
| Կարին . . . . . | 20 | „ |
| Աշկալա . . . . . | 21 | „ |
| Քոշուկ Բաֆդարիչ . . . | 23 | „ |
| Բերնահարան . . . . | 24 | „ |
| Խան-մաղէն . . . . | 26 | „ |
| Բայբուրդ . . . . . | 20 | „ |
| Ուրաշտի . . . . . | 23 | „ |
| Վուրլուկլեա . . . . | 15 | „ |
| Ուչլու-Տէհրան . . . . | 33 | „ |
| Զիրանդի . . . . . | 15 | „ |
| Մէրչմէկ . . . . . | 20 | „ |
| Շեբին-ղարահիսար . . . | 32 | „ |
| Էնդէրաս . . . . . | 29 | „ |

| | | |
|---|---|---|
| Ինոու | 29 | վ. |
| Գեթիու-գետի | 23 | „ |
| Սամայիլ | 27 | „ |
| Քաղի-քէօրպու-Կամուրջ | 26 | „ |
| Յոնտան | 15 | „ |
| Թոխատ | 50 | „ |
| Նարուիշ | 23 | „ |
| Երղիունէր | 14 | „ |
| Ենի-խան | 22 | „ |
| Մէլիթէլ | 19 | „ |
| Սիվաս | 32 | „ |

12) ԻԳԴԻՐԻՑ—ՎԱՆ (229 վ.)

| | | |
|---|---|---|
| Օրգովսկ | 14 | վ. |
| Ջինգիլ | 12 | „ |
| Ղարաբուլաղ | 6 | „ |
| Բայազէթ | 51 | „ |
| Գամարջիկ | 23 | „ |
| Զորան-Եղիդ | 22 | „ |
| Ծաթր-քեանդ | 28 | „ |
| Կերգան-ղալա | 23 | „ |
| Մուրաք | 30 | „ |
| Բեաչանի | 24 | „ |
| Վան | 28 | „ |



## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀ

15) ԷՆԶԵԼԻԻՑ—ԹԷՀՐԱՆ (292 վ.) վ.

| | | |
|---|---|---|
| Փիրբազար | 15 | „ |
| Ռաշտ | 8 | „ |
| Մէնջիլ | 65 | „ |
| Ղազվին | 69 | „ |
| Թէհրան | 135 | „ |

16) ԹԻՖԼԻԶԻՑ—ԹԷՀՐԱՆ

| | | |
|---|---|---|
| Բագուով | 1149 | վ. |
| Ջուղայով | 1135 | „ |

17) ՆՈՐ-ՋՈՒՂԱՅՈՎ ԹԷՀՐԱՆ (674 վ.)

| | | |
|---|---|---|
| Մարանդ | 60 | „ |
| Թաւրիզ ք. | 68 | „ |
| Թուրքմանչայի | 110 | „ |
| Միանէք | 30 | „ |
| Զէնգեան | 116 | „ |
| Սուլթանիէ | 35 | „ |
| Ղազվին | 120 | „ |
| Թէհրան | 135 | „ |

# XVII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անցեալ 1911 թ. «Մշակ» օրաթերթի մէջ տպուած տափակ ճիճուի (солитеръ) դեղի մասին շատերը դիմել էին մեզ դեղն ուղարկել, սակայն ոչ դեղի և ոչ էլ պատասխանի համար ոչ մի կոպէկ չուղարկած լինելով, մենք էլ ոչ ոքի չպատասխանեցինք։

Այդ պատճառով յայտնում ենք որ յիշեալ պարոնք առանց կանխավճարի ոչ ոքի ապառիկ դեղը չէ ուղարկում։ Իսկ մանրամասն տեղեկութիւն կամ պատասխան ստանալու համար դանկացողները պէտք է երկու փոստի մարքայ ուղարկեն։

Հասցէն. Թիֆլիս՝ Մակար Ամշկեան. Գարայելովի № 5.

# ԵՐԱԶԱՀԱՆ

Ինչ է երազը.—Ֆրանսիացի գիտնական Դելօնէն երազների կանոնաւորութեան մասին.—Մեր կարծիքը ժողովրդական երազահանի մասին։

Ի՞նչից է առաջանում երազը, կամ երազում տեսած ամեն մի առարկայ ի՞նչ է գուշակում—դեռ մինչև օրս ոչ ոք ճշտօրէն բացատրած չէ։ Թէև ի հնուց յետ է զանազան ժամանակներում եղել են երազների յայտնի բացատրողներ և մեկնիչներ, ինչպէս մեր այս տեսութեան վերջի մասում զետեղած երազների գուշակութիւնը, բայց քանի որ այդ գուշակութիւնները գիտութեան հիմնական փորձերով և ուսումնասիրութեամբ չէ բացատրուած, ի հարկէ դժուար է հաւատ ընծայել։ Երազի և տեսիլքների բացատրութիւնը, գիտութեան համար յայտնի նշանակութիւն ունենալով—ինչպէս հետևեալ գրուածքից կերևայ—շատերն այժմ քննութեան առարկայ են շինել

և ամէն մի մասնագէտ-գիտնական իւր տեսակէտից է քննում և հասկանում երազն ու տեսիլքը, այսպէս օրինակ.

Բնագէտը—այդ քննում է մարդկային մարմնին համապատասխանող և բնական օրէնքներին հպատակւող երևոյթների տեսակէտից։

Բ ժ ի շ կ ը—համարում է մարդկային մարմնի գործարանների կանոնաւոր կամ անկանոն գործողութեանց արգասիք։

Հ ո գ ե բ ա ն ը (պսիխալօգ) բացատրում է քնի ժամանակ, մարդու մարմնի մէջ գտնուած անյայտ գոյութեանց տեսակէտից, ինչպիսին են խելքը, հոգին և այլն։

Իսկ մագնիտիզմով և հիպնոտիզմով պարապողները, երազի երևոյթը մի-այլ տեսակ վճռելով և ընդունելով, նրանց տարբեր հայեացքներն ունենալու համեմատ էլ բացատրում են երազը. Այսպիսով եթէ որ քունը և երազը մի-



անգամից և միանկերպ մինչև օրս դեռ չեն կարողացել բացատրել և վերջ դրել զանազան տեսակ կարծիքներին և մեկնութիւններին, ևս առաւել դժուար է տեսիլքների և անուրջների պարզաբանութիւնը։ Ներկայումս մեծ մասամբ հաւատ են ընծայում բժիշկների ընդդիմախօսութեան, որոնք հեշտ կարօղանում են արհեստական քուն և երազ առաջացնել ուղիղ այնպէս, ինչպէս ոչնչացնում են աւելորդ քնաբերութիւնը. Մագնիսացնողն ևս ուղղակի քնացնում է մարդուն առանց դեղատան օգնութեան դիմելու (շարժուածքով-ձեռքերով և աչքերով) և միայն իւր ազդեցութեան շնորհիւ գրգռում է ու թմրացնելով անզգայացնում։

Մինչև օրս եղած քննութիւններից նաև երևում է, որ երազներն, անուրջները ու տեսիլքները միշտ զանազան տեսակ են լինում, նայած մարդու կարողու-

թեանը, կազմուածքին, նիստ ու կացին և մարդկային խառնուածքների համեմատ, տարբերւում են միմեանցից և բնաւորութեան նշաններով. օրինակ, բարկացող մարդը՝ երևակայում է զարհուրելի կռիւներ, պատերազմներ և այլն։ Մելամաղձոտը՝ ձորեր, անտառներ և տխուր տեսարաններ։ Մաղասոտ՝ հեզաբարոյ մարդուն երևում է անձրև, ծով, ջուր, ձկներ, անտառներ։ Արիւնային խառնուածք ունեցողին (songvinist) զուարճալի տեսարաններ։ Այսպէս, երազները հետևանք են լինում զանազան և անթիւ տպաւորութիւնների։

Մի քանի աստղագուշակներ էլ պնդում են, թէ ինչպէս արևը, լուսինը և այլ մոլորակներն իրանց դրութեամբ շարժմամբ ազդեցութիւն ունեն երկրագնդիս վրայ, այնպէս էլ ասում են նրանք, որ երազն էլ կախուած էլ նը-



րանից թէ ի՛նչն է ազդում քնածին, ուսինը թէ արևը. Նրանց կարծիքով լուսինը հովանաւորում է քնածներին այն ժամանակ, երբ արևը հակասում է քնին, բայց իբր թէ չի դադարում մարմնի վրայ բարերար ներգործութիւն անելուց։

Շատերն ասում են—ինչպէս էլ հընումը—որ քունը նման է մահուան, իսկ տեսիլքը կամ անուրջը մեր կեանքի ուղղութեան մի ինչ-որ տեսակն է։

Այսպիսի եղելութիւններին պէտք է վերագրել ամեն ժամանակի և շատ ազգերի պատմութիւններից յայտնի տեսիլքների երևոյթները, որոնք շատ անգամ ուղիղ նախագուշակում էին աղէտներ և ուրախութիւններ։ Այս պատճառով էլ հին ժամանակներում թագաւորներն ունէին իրանց գուշակող-խորհրդատուներն, որոնք անւանւում էին պալատական աստղագէտներ, աստղագուշակներ և մեկնիչներ։

Շատ նոյնանման օրինակներ կարող էինք բերել այստեղ՝ եթէ թոյլ տար մեր այս հրատարակութեան չափը։ Բայց ժամանակը և գիտութիւնը դեռ շատ բան կասեն այս խնդրի վերաբերութեամբ, որ մեծամասնութեանն այսքան հետաքրքրական և դեռ ևս անմատչելի գաղտնիք է։

Իսկ երազների կանոնաւորութեան մասին Ֆրանսիացի գիտնական Դելօնէն իւր վրայ գործ դրած փորձերից համոզուեց, որ երազը ուղղակի նրանից կախում ունի, թէ քնած ժամանակ ուղեղի որ մասն աւելի է տաքանում։ Օրինակ երբ իւր ճակատը ծածկում էր բամբակով, այդ ժամանակ քնում էր հանգիստ և կանոնաւոր։ Երբ գլխի ետևի մասն էր տաքացնում, արմանալի և անհանգիստ երազներ էր տեսնում. ձախակողմը տաքացնելուց՝ ֆանտաստիկական երազներ, ո-



րոնց մէջ երեւում էին վաղուց մոռացած տեսարաններ և պատկերներ. իսկ աջ կողմը տաքացնելուց երազները աւելի հանգիստ, խելացի և այնպիսի տեսարաններ էին ներկայացնում, որոնք մօտիկ անցեալին էին վերաբերում։

Վերջացնելով այս տեսութիւնը, աւելորդ չենք համարում մեր կողմից յայտնել, որ թէև մենք համամիտ չենք հետևեալ երեւններում զետեղուած երազների տուած գիտնական հաստատ բացատրութեանը, բայց ուսումնասիրութեան տեսակէտով քննելու որպէս — դարերով ժողովրդի գործածութեան մէջ մտած — նրա հետաքրքրութիւնը շարժող — ընթերցանութեանը նպաստող և գրաւող նիւթ՝ մենք հրատարակում ենք։

Մ. Զ. . . .

# ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

## Զանազան տեսակ երազների մասին

**Ա.** Աստուած.—Երազում Աստծուն տեսնելը՝ իբր թէ տեսնողի համար լաւ է բոլոր չարերից կազատուի. թէ աղքատ լինի կը հարստանայ, հիւանդ լինի կառողջանայ։ Երազում Աստծուն տան մէջ տեսնելը՝ նորոգութիւն է։

Աստղ.—Աստղ տեսնելը լաւ է. եթէ տան մէջ տեսնես՝ բարիքդ կաւելանայ, օտար տեղ լինիս, յաջողութեամբ կը վերադառնաս։ Եթէ շատ աստղեր՝ ճանապարհ կը գնաս և կը շահուես։

Ասպար առնելը՝ պատիւ է։

Աբեղայ տեսնելը՝ յարկ, պատիւ կամ կոխ է։

Աքաղաղ.—Զոհած աքաղաղը՝ բարի է և կռուի նշան։

Ագռաւներ.—Թշնամիներդ կը յարձակուեն քեզ վրայ։

Աթոռ տեսնելը մեծութիւն է։



Աթոռ նստելը՝ բարձրութիւն է։

Ալեւոր.—Իրան ծերացած տեսնելը հարստութիւն է։

Ալիւրը շահ և ուժ է։ Ալիւրն ամանով տեսնելը՝ մուրազ է։

Ականջը.—աղջիկ է, կնիկ և կամ աչքալուանք։ Ականջ կտրելը վնաս է։

Աղաւնի տեսնելը՝ շնորհք է։

Աղուէս տեսնելը՝ ահ ու երկիւղ է. թէ որսաս՝ թշնամուդ կը յաղթես. Աղուէսը, որ մարդուց փախչի—պարտականն էլ կը փախչի իրենից։ Աղուէսի հետ կռիւ անողը՝ իր օգուտն կռիւ կ՚անի։

Աղջիկ.—աղջիկ տեսնելը՝ խնդութիւն է։ Փոքր աղջիկ տեսնելը օգուտ է։

Աղբիւր.—Երազում աղբիւր տեսնելը շատ բաներից օգտուել է նշանակում. աղբիւրի վրայ լուացուելն՝ օգուտ է։ Աղբիւրից ջուր վերցնելը վատ է. աղբիւրից ջուր խմելը՝ շնորհք է և բարի։

Աղ.—Աղ և անանուխ տեսնելը՝ բարի և անուշ խօսք է. միմիայն աղ տեսնե-

ձը կոկիծ է, ապխտակ աղը՝ փող և օգուտ է. սև աղը՝ վատ խօսք և տրտմութիւն է. կոտրտած աղը՝ կռուի խափանում է։

Աղի ձուկը՝ հոգս է։

Աղեղն.—Աղեղ տեսնելը՝ զրոյց ճօշք է։

Ամպերի ճայթմունք լսելը՝ բարի չէ։

Իրեն աղեղնաւոր տեսնելը թշնամանաց լեզու է։

Աղիս հանելը՝ տան շինութիւն է և լաւ։

Աղքատին բան բաշխելը՝ բարի և օգուտ է։

Ամանաթ առնել և պահելը ճշմարտութիւն է։

Ամբաստանել մէկին՝ շատ վնաս է։

Այծ տեսնելը՝ ճանապարհ է։

Այրուած.—Այրուած հանդերձը՝ (շորը երկիւղ է։ Այրուած և աւերուած տեսնել իր տունը՝ վնաս է։

Անձրև ժամանակ տեսնելը՝ բարի է։

Անդաստան տեսնելն՝ աշխատանք է։

Անուշ ուտելիքը՝ լաւ է։

Անապատում նստելը՝ նեղութիւն է։



Աչք տեսնելը՝ փողի շատութիւն է։

Աչքեր տեսնելը՝ շատ հարստութիւն է։

Մեծ աչք ունենալ՝ երկարակեցութիւն է. աչք հանել երազում, վատ դէպք է։

Ապարանջանը նեղութիւն և հոգս է։

Առիծ.—Երազում առիծ տեսնելը՝ թագաւոր, իշխան և կամ մեծ մարդ է։

Եթէ երկու առիծ իրար հետ կըռուին՝ երկու թագաւոր կամ երկու մարդ կը կռուին։

Եթէ դու առիծի վրայ նստած լինես՝ իշխանութիւն է։

Եթէ Առիծը՝ դէմդ դուրս գայ՝ մեծ մարդուց երկիւղ կը հասնի քեզ։

Առու.—Տանդ մէջ առու տեսնելը գանձ և օգուտ է։

Ատամ.—Եթէ բոլոր ատամներդ թափուեն՝ շատ գանձ կը գտնես։ Եթէ առաջին ատամդ ընկնի՝ ծանապարհ կը գնաս։ Առաջին ատամները հանելը վատ է։ Ներքին ատամներ հանելը տրտմութիւն է, իսկ թէ վերը հանես

ազգականներից վնաս է։ Սևացած ատամները՝ հիւանդութիւն է։

Արեգակ.—Երազում արեգակ տեսնելը՝ թագաւոր է։ Արեգակը իր ձեռքում տեսնելը՝ պարոնութիւն է տեսնողի համար։ Խաւար արեգակ տեսնելը՝ տեսնող պարոնի համար չար է։ Երկնքից ընկած արեգակ տեսնելը՝ թագաւորի մահ է։ Արեգակ (մէկ) տեսնելը նեղութիւն է. արևն ամպի տակ տեսնելը՝ նեղութիւն կամ պայծառութիւն է։

Արծաթը նեղութիւն է։ Արմաւը՝ շատ բարի և անոյշ խօսք է։ Արմաւենին զաւակ և ուրախութիւն է։

Արիւն թափելը՝ մեծ վնաս է։

Արիւն կամ արիւն առնելը՝ շնորհք է։

Արծիւ.—Արծիւ տեսնելը՝ աւագութիւն է։ Արծուի վրայ որ նստես՝ պարոնութեան կը տիրանաս։ Արծուի հետ, որ կռուես՝ կամ խփես՝ մեծ մարդկանց կը նախանձես և հետները կը կռուես։



Եթէ արծիւը քեզ խփի՝ մի պարոնից զէնք կ՚առնաս։

Արջ տեսնելը՝ անիրաւ և ագէտ մարդու խօսք է։ Արջից հալածուելը՝ կռուից կազատուես կամ մեծից զգոյշ կաց։

Ամեն գայլ գազան՝ թշնամի է։

Աւետարանը՝ մուրազ է։

Աւազանը՝ ռոճիկ և օգուտ է։

Աւազը որ ձեռք ածես՝ մեծ մարդուց բան կը առնաս։

Աւազակ որ տեսնես՝ զգուշացիր կռուից։

Աւագ.—Իրան աւագ տեսնելը՝ շատ լաւ է և բարի։ Աւագ որ տեսնես՝ թըշնամին երկրի վրայ կը յարձակուի։

Աւրեղ.—որ է Սուլուխ՝ շատ գանձ է։

Բ. Բարձրանալ երազում և վայր ընկնել, մէկի ձեռքով՝ վնաս է։

Բարձր տեղերի վրայ եթէ քայլես, մեծութիւն կը գտնես։

Բարձր տեղից ընկնելը՝ վնաս է։

Բարբառոտի և ուրիշ սազերի ձայնը՝ անոյշ խօսք է։ Բարև տալը՝ կռիւ է։

Բաղանիքը՝ հոգս է։ Բաղանիք եթէ գնաս, խարէութեան մէջ կընկնես. Բաղանիքից եթէ դուրս գաս, հոգսերից կազատուես։ Բաղանիքում լուացուելը առճիկ և մեծ նեղութիւն է։

Բադ տեսնելը՝ մեծ մարդ է։

Բազ շինելը կամ հիմք ձգելը բարութիւն է։

Բահը լեզու է։

Բամբակն՝ արդարութիւն է։

Բանջարը՝ շահ է։

Բերդ որ տեսնես՝ թշնամիներից մօտ ճշմարիտ դուրս կը գաս։ Բերդ մտնելը՝ պարիսպ և ամրութիւն է։ Բերդի մէջ նեղութիւնից ազատուել է։

Բերան լուանալը՝ ռոճկի պակասիլ է։

Բիր տեսնես՝ կամ առնես՝ եղբայր կամ որդի է։ Բիր կտրելը՝ եղբօր կամ ազգականին վնաս գայ։

Բլուր տեսնելը՝ երկրի խաղաղութիւն է։

Բու տեսնելը՝ նեղութիւն է։

Բուրվառ տեսնելը կամ առնելը՝ լաւ



է, կուխ է։

Բուրդ.—Սպիտակ բուրդ տեսնելը կամ առնելը՝ առողջութիւն և օգուտ է։ Սև բուրդը՝ տրտմութիւն է։

Բոբիկ իրեն տեսնելը՝ զէնք կը գայ իւր վրայ։

Բորոտ.—Իրեն բորոտ տեսնելը՝ գանձի շատանալ, մեծութիւն և շահ է։

Բողկ ուտելը՝ առողջութիւն և օգուտ է։

Բրել կամ գործել, բարի և շահ է։

Գ. Գառներ տեսնելը՝ մեծ շահ է, Գառներ մորթելը՝ լաւ չէ. գառներ լուանալը՝ զէնք և տրտմութիւն է։

Գազան տեսնելը՝ առանց վնաս-կու և երկիւղ է։ Գազանի խաղալը՝ թշնամու հաշտութիւնն է, իսկ փախչելը՝ խաղաղութիւն։

Գանձ տեսնել կամ առնելը՝ շահ է։

Գարին՝ բաղդ կամ բաժին է։

Գայլ սպաննես՝ թշնամուդ կը յաղթես. գայլի վրայ նստես՝ նեղութիւն է։

Գաւազան որ տեսնես՝ թշնամուդ դէմ կ՚ամրանաս։ Գաւազանը ձեռքիդ՝ լաւ է, որդի կամ մեծ շահ է։

Գաւաթ բռնելը՝ զաւակի (ունենալու) խնդութիւն է։

Գետ.—Գետ անցնելը՝ ձի հեծնել է։ Յստակ ու պարզ գետին մտիկ տալը՝ ազատութիւն է, պղտորը՝ լռութիւն է. գետում լուացուիլը նեղութիւն է։ Գետում վերևից ներքև գնալը՝ պարտութիւն է։

Գերի տեսնելը՝ նեղութիւն է. իրեն գերի տեսնելը՝ մեծութիւն և շահ է։

Գերի.—Ճանապարհ գնալ՝ նեղութիւն է։

Գերանը որ կոտրուի՝ տանուտէր կ՚մեռնի։

Գերեզման բացելը՝ վնաս է.—իրան գերեզմանում տեսնելը՝ պատասխանի ենթարկուել կամ բանտ ընկնել է։

Գեղեցիկ պատկերը նկարած տեսնել՝ փառք է։

Գէշ հոտը՝ գէշ խօսք է։

Գինի խմել կամ գնել՝ ոյժ և շահ է։

Գինձը՝ անուշ խօսք է։ Գինձ ուտել



կամ ժողովելը՝ կռիւ է։ Գինձ հագնելը՝ մեծ շահ է։

Գիսաւոր աստղը՝ մեծութիւն և պատիւ է։

Գիրք կարդալը՝ ժողով է և նեղութիւն։

Գիր գրելը՝ բարի և մուրազ է։

Գլուխ.—Կտրած գլուխ ձեռին տանելը՝ շատ գանձ գտնել է, գլխին դեղ քսելը՝ անուշ խօսք է, գլուխ ածելել տալը՝ նեղութիւնից ազատուել. ուրիշների գլուխն ածելելը՝ ցաւից ազատուել է, գլուխ լուանալը կամ գլխով բան տեսնելը՝ զէնք է։ Սպիտակ գլուխը՝ յանկարծակի վնաս։

Իրեն գլխատուած տեսնելը՝ մեծ վնաս է

Գխտոր տեսնելը՝ ցոյց է տալիս ցընծութիւն և աղքատութիւն։

Գնդակ խաղալը՝ մեծի համար լաւ է, իսկ փոքր մարդուն՝ վատ։

Գոմէշ.—Գետի մէջ գոմէշ տեսնելը՝ բարի զրոյց է նշանակում։

Գոմ շինելն ուրախութիւն և շահ է։

Գոյնզգոյն հալաւը՝ ուրախութիւն է։

Գործի ձայն լսելը՝ ուրախութեան լուր է։ Գործ եթէ սպանես՝ հաւատացեալ մարդու հետ հաշտութիւն կանես։

Գլխարկ ծածկելը՝ հարկիք է։

Գրաւական հանելը՝ իր տանից վնաս է։

Գրող տեսնելը՝ վատ է։

Գրիչ և կաղամարը, խելք կամ ճանապարհ է։ Գրչամանը՝ կին է։

Դ. Դանակ տեսնել կամ գնել, լաւ չէ, բայց վատ լեզուն խափանել է։

Դաշտ՝ ահու բան կ'առնես։

Դաշտից որ դուրս գաս՝ ազատութիւն է։

Դատաւորն՝ Աստուած է և դրութիւնըդ կ'լաւանայ.

Դատաստանը՝ մեղաց քննութիւն է։

Դարպաս շինել կամ տեսնելը՝ հարուստ կնիկ է։ Դարպաս լայնացնելը պարոնութիւն է։ Դարպաս փակելը՝ մեծ մարդուց վնասուել է։

Դարբինը մեծ մարդ է։ Դարբնութիւն



թէ ինքդ անես, լաւ տանտէր կը լինես։ Դարբնի հարուածը, ամենը բարի է։

Դեղին գոյնը՝ բոլորովին վատ է։

Դևը՝ նեղութիւն և մեղաց նշան է։

Դգում ցանելը՝ ջերմ, իսկ ուտելը հիւանդութիւն է։

Դիակ՝ բարի զրոյց է։

Դիպակ տեսնել կամ հագնելը՝ մեծ պատիւ է։

Դմակ տեսնել կամ ուտելը՝ հիւանդութիւն է։

Դուռը՝ պատիւ է և մեծ մարդու հետ ծանօթանալ։ Դուռ բանալը՝ իր բաղտի բացուիլ և իր կամքի կատարուիլն է։ Դուռ ձգելը՝ կործանումն։ Դուռ կոտրելը վատ նշան է։ Դուռը դուրս գալը՝ լաւ չէ։

Դրամ տեսնել կամ ժողովելն՝ ագահութիւն է։

Դպրանոցին բարև տալը՝ կռիւ է։

Ե. Եզն՝ ահի մէջ գնալ։ Եզը նստած տեսնես՝ մեծ աւետիս է կամ ախբերմդ կը գայ։ Եզան միս ուտելը՝ լաւ է

բայց ոմանք ասում են թէ նեղութիւն է։ Եղների կռուելը՝ թշնամի է։ Եղը մորթելը՝ վնաս է։ Եղ ուտելը՝ բարի է։

Եղնիկը տանը տեսնելը՝ սիրելին գայ։

Եկեղեցի տեսնել կամ շինելը՝ փառք է։ —Եկեղեցի երթալ ազատութիւն է։

Եղջերուն՝ երկրի նեղութիւն է։

Երգեհոնը՝ տխրութիւն է։

Երկինք բարձրանալը՝ մեծ պատիւ է

Երկիրն՝ խնդութիւն է։

Երկանք տեսնել կամ աղալն՝ անհանգստութիւն է։

Երկաթ տեսնել կամ գնելը՝ տրտմութիւն և շատ վատ է։

Երակ կտրելը՝ վնաս է։ Երակից արիւն անելը՝ սրբութիւն է։

Երես լուանալը՝ չէն է.—Դեղին երեսը մեղկ է. կարմիր երեսը՝ գործը լաւ կերթայ.—Գեղեցիկ երեսը՝ մեծ փառք է։

Երազ պատմելը երազում շատ լաւ է

Երեցը յարութիւն առնելիս՝ հին գրոյց է։ Մեռած աւագ երեցին կենդանացած տեսնելը՝ մեծ գրոյցի նորոգութիւն



է։ Երէցին մեռած տեսնել՝ մեծ գրոյցի խափանումն է։ Երէցի գրիչ տեսնելը՝ խելք ու ճանապարհ է։

Զ. Զանգակի ձայն լսելը՝ խնդութիւն և ուրախութիւն է։

Զաֆրանը՝ հիւանդութիւն է։ Զաֆրանով կերակուրը՝ լաւ է։

Զենելը—մորթելը՝ մեծ նեղութիւն է։

Զինուորը՝ տրտմութիւն է։

Զմրուխտը լաւ է։

Զնդանը մեծ հոգս է։

Զուռնան կամ զուռնի ձայնը որ լսեն՝ անձրև կամ կռիւ է։

Զրոյց անելը՝ նեղութիւն է։

Զրահը՝ վատ է։ Զրահ հագնելը՝ չէն է։

Է. Էշը՝ շատ նեղութիւն է. սպիտակ իշէն հեծած կամ բեռած՝ բարի է և պատիւ։

Ը. Ըղունգ ունենալը՝ աղքատութիւն է։ Ընկոյզ ժողովելը՝ լաւ չէ։

Թ. Թագաւորին ողջունելը՝ փառք է։ Թամք շինողը՝ իրաւարար է։

Թանաք եփելը՝ լաւ է։ Թանաք վե-
րեից թափելը՝ վատ խօսք է։
Թարախով իրան տեսնելը՝ շահ է և
հարստութիւն։
Թաղնուած իրան տեսնելը՝ բարի է։
Թեւաւոր իրան տեսնելը՝ հոգիների
հանդիպել է։
Թիր բանը՝ նեղութիւն է։
Թղի ծառը՝ լիրբ մարդ է.—Թուզը (կա-
նաչ) տեսնել կամ ուտելը վնաս է։ Թուզ
(չոր) ուտելը՝ շահ է։
Թուխ իրան տեսնելը՝ մեծութիւն է։
Թռչելը՝ ուրիշ տեղ գնալ է։ Թռչե
կորից՝ այլ կին առնել է նշանակում։
Թռչել բարձրանալու համար՝ լաւու-
թեան հասնել է. Թռչելիս՝ ուրիշ եր-
կրում մեծութիւն կ'ստանայ։
Թռչունի քեզ մերձենալը՝ մի անձն երա-
նի է տալիս քեզ. Թռչուն արձակելը՝ բա-
րութիւն է. Թռչունի փախչելը՝ վնաս է։
Թռչունների կռուելը՝ վնաս է։ Թռչունի
հետ խաղալը՝ թշնամիքդ կ'սիրեն քեզ։

Ժ. Ժամատունը եթէ զարդարած տես-



նես՝ արքայութեան արժանի կը լինես։
Ժամ գնալը՝ կեանքդ բարի լինել է։
Ժամատանը աղօթելը՝ լաւ բան անել է։
Ժամհարը՝ վատ դրութեան կը հասնես։
Ժուռ գալը՝ լաւ չէ։
Ժամացոյցը՝ օգուտ է։

Լ. Լոյսն.—աշխարհի խաղաղութիւն
է.—հանգած լոյսը տրտմութիւն է։
Լուսին—և արեգակն առաւօտեան
տեսնելը՝ ազգին վնաս է։
Լուսնի սառը՝ խիստ շահ է.—կար-
միր լուսինը՝ վնաս է։
Խաւար լուսինը՝ թագաւորի մահ է.—
երկու լուսին տեսնելը՝ թագաւորներ
իրար դէմ կը վերկենան։
Լուն՝ առճիկ է։
Լուծը՝ (եզների) բարի է։
Լեառն (բարձր) որ տեսնես՝ ազատու-
թիւն է։

Խ. Խան կամ սուլթան տեսնելը անչափ
լաւ է։
Խաչակնքել երազում՝ մեծ պատիւ է։
Խաչը՝ չարչարանք է։
Խաւարը՝ նեղութիւն է։
Խաւեարը՝ հիւանդութիւն է։

Խաղողը՝ անձրև և ցնորք է.—սպիտակ խաղողը՝ խնդալ է։ Սևը՝ լաւ է. ճողոված խաղողը՝ գանձ է։

Խալահանդերձը՝ իշխանի մահ է։

Խեցեղէն աման բռնելը՝ ուրախութիւն է։

Խմոր ուտելը՝ շահ է։

Խնդալը՝ լաւ չէ։

Խնձորը՝ տղայ է, իսկ ուտելը՝ շահ.—խնձոր առնելը՝ բարի համբաւ է.—խընձորի ծառը մեծ մարդ է։

Խուլը և համրը՝ շահ է։

Խունկ ծխելը՝ ապրանք և անուշ խօսք է

Խորոված միս ուտելը՝ շահ է։

Խոզը՝ այլազգի է.—խոզի՝ միս ուտելը՝ ազգականների մահ է։

Խոտը՝ լաւ մարդ է.—խոտ ժողովելը պատիւ և փառք է։

Ծ. Ծաղիկ.—Ծաղկեայ անդաստանը՝ կանաչ, ուրախութիւնէ. ծաղկըն անհանգստութիւն. է ծաղիկ քաղելը՝ կին առնել է. ծաղկելը՝ բարի է։

Ծառ.—Ծաղկած ծառը—պտղով ծառը բարի է. ծառ կտրելը կամ այրելը վնաս է. ծառը եթէ ծխի՝ լաւ չէ. ծառի



տերև թափուելը՝ արիւնհեղութիւն է. ծառ վայր ձգելը մարդուն վատ է. մեծ ծառ կտրելը՝ մեծ մարդու մեռնիլ է. ծառի վրայ նստելը՝ և մանգալը՝ փառք է. կանաչ ծառը՝ գանձ է. չոր ծառը՝ տրտմութիւն է. ծառ զուգելը կին է։

Ծամ (հիւս) կտրելը՝ բաժանումն է։

Ծառան՝ նեւտիք և խնդութիւն է։

Ծարաւելը՝ բարի չէ։

Ծանր բան շալակելը՝ մեծ մեղք է։

Ծիծաղելը՝ տրտմութիւն է։

Ծիծը՝ տղայ կամ մեծութիւն է։

Ծնանելը՝ (կնոջ) մեծ շահի գալ է։

Ծունր դնելը՝ առ Աստուած յոյս է։

Ծով.—պղտոր ծովը՝ նեղութիւն է. ցամաք ծովը՝ աշխարհի լիութիւն է. ծովում լուացուելը՝ շահ է. ծով մտնելը՝ թշնամիներից կարդարանաս. ծովը որ մարդու ներս քաշի՝ դռղի ձեռքով սպանուիլ է նշանակում։ Ծովակի վրայ նըստելը՝ զուարթութիւն է. ծովից դուրս գալը՝ պատիւ է և ազատութիւն,—չը դուրս գալը՝ մեծ վնաս է։

Ծեր.—ծերութեան ժամանակ իրան մանուկ տեսնելը՝ կեանքի աւելանալն է։ —Իրան ծեր տեսնելը մանկութեան ժա-

մանակ՝ նոյնպէս կեանքի աւելանալն է։

Կ. Կամուրջ շինելը, շատ լաւ է։

Կառք նստելը՝ մեծ պատիւ է։

Կաղամբի տակ հանելը՝ վնաս է։

Կենդանի իրան գերեզմանի մէջ տեսնելը՝ մեծ զրոյց է։

Կին առնելը՝ վնաս է. կնոջ հետ խօսելը՝ տրտմութիւն է. մազերն արձակած կինը՝ նոյնպէս վնաս է. գեղեցիկ զարդարած կինը՝ երկիր է կամ քաղաք. կնոջ մազ կտրելը՝ շատ վնաս է. կնոջ նայիլը՝ բարի և լաւ է։

Կիտրոնը՝ անոյշ խօսք է։

Կոյս.—իրան կոյս տեսնելը՝ խիստ շահ է. կոյսի հետ խօսելը տրտմութիւն է. կոյսի հետ հաց ուտելը՝ բարի է։

Կուժը՝—որդի է. ջրով կուժը՝ բոլորովին բարի է։

Կորեկը տանը տեսնելը կամ ուտելը ցիութիւն է։

Կրակ ձգելը՝ սով է։

Կտաւ հանելը՝ բարի չէ։

Կայծակը՝ խռովութիւն է։

Կարկուտը՝ երկրի նեղութիւն է։

Կարասը՝ նեղութիւն է։



Կօշիկ տանը տեսնել կամ հագնելը ճանապարհ է։

Հ. Հաց տեսնել՝ երազում բարի է և լաւ։

Հաւ.—հաւը ձուի վրայ՝ անակնկալ շնորհք է. հաւ-սիրամարգ մեծ իշխան է. հաւի խօսելը՝ մարդու կեանքից զրկուելն է։

Հաղորդ առնելը՝ մարդու ծեծ է։

Հասկ քաղելը՝ ուրախութիւն է։

Հարսանիքը՝ տրտմութիւն է։

Հայրապետը՝ մեծ զրոյց է։

Հայր.—մեռած հօրը կենդանացած տեսնել՝ մեծ շահ է։

Համր և խուլը՝ շահ է։

Հալաւ այրած տեսնելը՝ կնոջից շահուել է։

Հանդերձ կորցնելը՝ վնաս է։

Հեռաւոր տեղ իրան տեսնել՝ կամ ուրիշ մէկին՝ շահ է և բարի։

Հիմք ձգելը՝ հարստութիւն է։

Հիւանդը՝ նեղութիւն է։

Հող վեր առնելը՝ նեղութիւն է։

Հում միս ուտելը՝ մեծ զրոյց է։

Հոր փորելը՝ շատ նեղութիւն է։

**Ձ.** Ձի.—սպիտակ կամ սև ձի նստելը՝ բարի է և պատիւ. վազող ձի նստելը խիստ լաւ է. սև ձի կամ ջորի նստելը մեծամեծներից շահ ստանալ է։ Ձին սարում տեսնելը՝ մեծութեան հասնելու նշան է։

Ձեռը լուանալ՝ բարի է. ձեռիդ ճըրագ բռնած՝ որդի լինի քեզ։

Ձէթ եփելը՝ մուրազ և լաւ է։

Ձու տեսնել կամ ժողովելը՝ կռիւ է։

Ձոր տեսնել կամ անցնելը, նեղութիւնից կ'ազատուես։

Ձուկը՝ չար լեզու է.—Ջրից հանես՝ ամպ, ձիւն կամ ջեռմ կ'լինի. ձուկը ոտ կրակին տեսնես՝ երկրի նեղութիւն է։

**Ղ.** Ղամպար վառելը՝ բարի է։

**Ճ.** Ճանապարհ գնալն ու գալը բարի է։

Ճուտն՝ երկայն ճանապարհ է։

Ճառ՝ գրած տեսնել կամ լսել՝ հոգս է։

Ճնճղուկ տեսնել կամ բռնելը՝ բարի է։

Ճրագ վառած՝ ծածուկ գործ կ'յայտնուի. անցած ճրագը տան կործանումն է։

**Մ.** Մատանի.—մատանին իշխանու-



թիւն է. մատանին կոտրած՝ վնաս է. մատանին կորցնես՝ կինդ կամ սիրելիդ կը վնասուին. երկու մատանի ունենալը՝ երկու կին կ'առնես. արծաթի մատանի՝ նեղութիւնից ազատուելու նշան է։

Մարգարիտը՝ մեծութեան նշան է։

Մարդու լերդ ուտելը՝ գանձ գտնել է. մարդու ոսկոր ուտելը՝ բանտ մըտնել է. փոքր մարդը շնորհք է։

Մեխեր ժողովելը լեզուներ են։

Մեծահասակ իրան տեսնելը՝ փառք է։

Մեծ փակեղ ուսովդ ձգելը՝ շնորհք է։

Մեռել.—իրան մեռած տեսնելը՝ շատ ապրել է. մեռելը թէ խօսի զգոյշ կաց մի հաւատայ. մեռել թաղելը՝ շփոթուել է. մեռելը գերեզմանում տեսնելը չարը կ'խափանուի. շատ մեռելներ տեսնելը՝ թշնամիներդ կ'յարձակուեն։

Մեղր ուտելը՝ սրտնեղութիւն է։ Մետաքս տեսնելը՝ օգուտ է։

Միս տեսնել կամ ուտելը հիւանդութիւն է, իսկ խորոված միս ուտելը՝ շահ։

Միրգ ուտելը՝ հիւանդութիւն է։

Մոմը վառած՝ ուրախութիւն և որդի է։

Մորեխը՝ հոգս է և աշխարհի վնաս։

Մութը՝ վնաս է և չար։

Մուկը՝ նոյն է։

Մորուքով իրան տեսնելը՝ շնորհք է։

Ն. Նախիրը որ գեղը գնայ՝ պաշտօն է։

Նապաստակը՝ իրեն տղայ լինի։

Նաւ.—Նաւորդ լինելը՝ զրոյց դուրս գայ. ոսկու կամ արծաթի նաւը՝ բարի է. նաւ նստես՝ շատ կ'ապրես. նաւերի խումբ տեսնես՝ շահ կ'գայ քեզ. նաւը խանձով նեղութիւն է. նաւ այրելը երկրի վնաս է. կոտրած նաւը՝ վատ է։

Նոր բան տեսնելը՝ օտարութեան կ'երթաս։

Նուռը՝ օտարներից շահուել է։

Նստել և ողբալը՝ շատ նեղութիւն է։

Շ. Շապիկ սպիտակ տեսնել կամ կարել՝ արդարութիւն է. սևը՝ տրտմութիւն է, աղտոտը մեղք է։

Շինութիւն կառուցանելը՝ բարութիւն. քանդելը՝ վնաս։

Շաքարաջուր խմելը՝ իմաստութիւն է։

Շիշ իւղով առճիկ և շահ է։

Շորը՝ փառք է։ Շորեր (նոր) ուրախութիւն և շնորհք է։ Շորեր գոյնզգոյն



վնաս է։ Խայտաշորեր, ապա մարդ մեռնի՞։ Շորեր կորցնելը վնաս է։

Շուն.—շների իրար հետ կռուիլը՝ վատ է. շունը որ հաչէ կամ կծէ չար լեզու է և չար մարդուց պէտք է զգոյշ լինես։

Ո. Ոսկին կամ արծաթը՝ շահ է։

Ոսկէ խնձորը՝ պատիւ է։

Ոչխարը—ձմեռ է և ցուրտ. սև ոչխարը՝ սուգ և տրտմութիւն է. ոչխարը ճանապարհին հարստութիւն է։

Ողբալը՝ շատ նեղութիւն է։

Ուղտը - պարոն է. երկու ուղտի կռուիլը իշխաններ կ'կռուեն. էգ ուղտ նստելը հիւանդութիւն է։

Որս գնալը՝ բարի է։

Ջ. Ջամիչը՝ շատ վնաս է։

Ջամանը՝ կռիւ և աղաղակ է։

Ջանկը՝ տրտմութիւն է։

Ջիրը՝ սակաւ շահ է։

Ջուխա.—կանաչ չուխան՝ հարստութիւն է. սևը՝ տրտմութիւն։

Պ. Պատարագը կռիւ է։

Պարտէզ տնկելը՝ բարի է։

Պղպեղը—կծկիծ է. պղպեղ ուտելը

Թշնամիներից պատրաստ կաց։

Պսակ—արծաթի՝ հիւանդութիւն է. փշից պսակ շինելը՝ մեծ շահ է. քարից շինած պսակը՝ մեծութիւն է։

Պսակուիլը՝ լաւ է, յաճախ կռիւ է։

Ջ. Ջաղաց—շինելը՝ մեծութիւն է. քանդելը՝ շինութիւն է. Ջաղացի ա-ղունր հիւանդութիւն է։

Ջայլամը՝ նեղութիւնից կ'ազատուես։

Ջուր—սուրբ խմելը՝ լաւ է. պղտոր ջուրը տեսնելը կամ խմելը՝ տրտմութիւն է. տանդ մէջ ջուր տեսնելը՝ լաւ չէ. գնացող ջուրը՝ բարի է. գետից ջուր վեր առնելը՝ վնաս է. աղբիւրիցը՝ բարի է։

Ռ. Ռեհանի ծաղիկը՝ բարի է։

Ռումբ—կանգնած ռումբը՝ մեծութիւն և պատիւ է. ձեռքին ռումբ բռնելը՝ ճանապարհ է և երկիր։

Ռուս տեսնելը՝ մեծ հակառակութիւն է։

Ս. Սաղը՝ մեծ մարդ է։

Սագը.—սագ ուտելը հիւանդութիւն է։

Սալորը՝ առողջութիւն է։



Սամիթ.—դալարը՝ լաւ, չորը՝ վատ է։

Սանդուղ (կանգնած) մեծութիւն է։

Սանդր բռնելը՝ զէնք է։

Սենեակ քանդելը՝ կնոջից բաժանուիլ է։

Սեխը՝ լաւ է, ուտելը՝ հիւանդութիւն։

Սիսեռը՝ բարի է։

Սիւնը՝ նեղութիւն և կռիւ է։

Սխտորը՝ կսկիծ է։

Սոխը.—կսկիծ է. ուտելը՝ հիւանդութ.

Սուգ անելը՝ ուրախութիւն է։

Սուլուխ տեսնելը՝ գանձ է։

Սուլթան տեսնելը՝ անչափ ցաւ է։

Սիրամարգ տեսնելը՝ մեծ եղջիւր է։

Վ. Վախեցած իրան տեսնել՝ օգուտ է։

Վանք և աբեղայ, նեղութիւն է։

Վառած. մէկին տեսնել վնաս է. իրան վառած տեսնելը հարստութիւն է։

Վարդ.—կին կ'առնես. վարդ քաղելը բարի է։

Վերմակը՝ հարուստ կին է։

Վիշապը՝ մեծութիւն կամ վնաս է։

Տ. Տաճար զարդարած՝ բարի են տաճար այրելը թշնամիքդ կը կռուի.

Տաճիկը՝ թշնամիների յարձակումն է։

Տախտը՝ մեծութիւն է։ Տախտը դիպա-կով՝ բարի է. տախտը, կանաչ, ցաւ է

Տանձ ուտելը՝ հիւանդութիւն է։

Տառեխ-ձուկը՝ ճանապարհ է։

Տիկը՝ տրտմութիւն է։

Տիկինը՝ նոյն է։

Տղայի գիրկն առնելը, ցաւ է։

Տուն—շինելը՝ շատ բարի է. տուն քանդելը՝ վատ է. իր կամ ուրիշի տունը քանդուած տեսնելը՝ անիրաւութիւն է։

Ց. Ցեցը—լեզու է. ցեց հանելը՝ նեղութիւն կամ լաւ է։

Ցեխը՝ վնաս և տրտմութիւն է։

Ցորեանը՝ ցնորք է։

Ցուլ բռնելը՝ լաւ է։

Փ. Փայտը, շատ բարի է։



Փոխինձ ուտելը՝ զէնք է։

Փող ածելը՝ մեծութիւն և բաղդաւորութիւն է։ Մարդուց փող առնելը՝ շահ է, իսկ եթէ կինն փող՝ առնի տղայք կունենայ։

Փուշ կտրելը՝ թշնամիներին կորուստ է։

Փոքր մարդը՝ շնորհք է։

Ք. Քաղաք մտնելը՝ բարի է։

Քաղցր բան ուտելը՝ լաւ չէ։

Քար ձգելը՝ վնաս է. քար ժողովելը. լեզու է. քարից հիմք ձգելը՝ թշնամի է։ քարի վրայ նստելը՝ մտածմունք է։

Քացախ խմելը՝ չարը կ'խափանուի։

Քղամիտ հագնելը՝ խնդութիւն է։

Քահանայից խաչ առնելը՝ վիշտ է։

Քոշ տեսնելը ճանապարհ է ցոյց տալիս

Օ. Օձը.—թէ հետդ խօսի, այնպիսի բան կ'անես որ բոլոր աշխարհը կ'զարմանայ. օձ թէ սպանես՝ թշնամուդ կյաղթես. մահճիդ վրայ եթէ օձ տեսնես

կին կ՚առնես. օձը թէ խայթէ՝ թշնամիներից վնաս գաս. օձը թէ վրադ յարձակուի թշնամիներից ահ գաս. օձը թէ փորդ մտնի՝ թշնամիներդ կը չարախօսեն. օձին անկողնում սպանելը՝ կինը կ՚մեռնի. օձ տեսնես և չվախես՝ թշնամիներիցդ անհոգ կաց. օձը տանդ մէջ տեսնես, կինդ կը թշնամանայ. օձին թէ երկու կտոր անես՝ թշնամուցդ շահ կ՚գաս։

Օղի խմելը՝ ուրախութիւն է։

Օշինդր տեսնել կամ խմել՝ կռիւ է։

## ԵՐԱԶԱՑՈՅՑ ԼՈՒՍՆԻ

Ըստ Պտղոմէոսեան աղիւսակի *)

—

Լուսնի 1, 3, 5, 9, 13, 18, 19, 22, 26, 30 օրն—Երազն ի բարին կատ.
„ 2, 10, 12, 16, 28—Երազն երեք օրն կատարի։
„ 8—Երազն ութ օրն կատարի։
„ 23—Երազն երեսուն օրն կատ.
„ 14—Երազն քառաս. օրն կատ.
„ 11, 15, 17—Երազն օրն կատ.
„ 6—Երազն ի տարին կատարի։
„ 29—Երազն լաւ է։
„ 4, 7, 20, 21, 24, 25, 27—Երազըն սուտ է։

---

*) Ի հնումն ոչ թէ միայն տգէտ ամբոխն էր հաւատում երազների գուշակութեանը, այլ և դրան հաւատ էին ընծայում այն ժամանակուայ գիտնական ուսումնասէրները և աստղագուշակները (աստրոլոգ), որովհետև կարծում էին որ երազ տեսնելը կախուած է տարւայ եղանակներից, որոշ օրերից և

# ԻԳՆԱՏԻՈՍԻ ԱՐԱԾ ՓՈՐՁԵՐԸ*

մարդու մարմնի խաղերի մասին

---

Գագաթը երբ խաղայ՝ բարի է, ամենքից սիրուի, իշխաններից պատուի, ճանապարհորդի, շահի և ուրախանայ։

Գաղտն՝ մեծութեան նշան է, ճանապարհ գնայ և ուրախանայ։

Գլխի վերի կողմը՝ պատիւ է և հոգս։

Գլխի ամբողջ խաղալը՝ շատ բարի է, կորուստ կ'ունենայ, գաղտնիք տեսնէ և լսի։

Ճակատը՝ շատերից սպասուի, գանձ գտնի և մեծ փառքի հասնի։

Քներակն աջը՝ ցաւից ազատուի, կանանց պատճառաւ հոգս քաշի և վնասուի

---

լուանոյ՝ ինչպէս շարժողութիւնից, այնպէս էլ նրա ազդեցութիւնից։ Այդ հիման վերայ և հնարուած է վերոյիշեալ Պտղոմէոսեան երազացոյց աղիւսակը, որը զետեղում ենք այստեղ որպէս ի հետաքրքրութիւն ընթերցողներէդ։ Ծանօթ. Աշխատասիրողի՝



Ձախ քներակն՝ լուութիւն շնորհք եւ պատիւ է կամ մարդու հետ կռուի։

Ցօնքն աջը՝ կորուստը գտնի և սրտին թեթևութիւն լինի.—ձախը՝ լուութիւն, կեանքի երկարութիւն շահի կամ տկարանայ.—յօնքի մէջը՝ նեղութեան համբաւ լսի, անկարգ բանի հանդիպի՝ տրտմի և վիրաւորուի։

Աչքը—աջ աղբիւրն՝ սրտնեղութիւն, տրտմութիւն է, բայց բարի լինի Թշնամու հետ կռուի, վէրք կամ լաց է.—ձախ աչքի աղբիւրն՝ բարի եւ առողջութիւն, հեռաւորին տեսնի սրտնեղի. աջ աչքի յետի աղբիւրը շատ բարի է, հեռաւորին տեսնի խնդայ.—ձախ աչքի աղբիւրն՝ հարստութեան և մեծութեան հանդիպի, ազգականներին տեսնի և խնդայ.—աջ աչքի վերի կոպը՝ հարստութիւն է, ցնծայ կամ սրտնեղի, արտասուի, բայց շուտ ազատուի.—ձախ աչքի կոպը՝ ատելութիւն և լաց է. յետոյ բարի և ուրա-

փութիւն. —աջ աչքի ներքեւի կողմը՝ հեռու ճանապարհ գնալ, հեռաւորին տեսնել, բարի և խնդութիւն է.—ձախ աչքի կողմը՝ ցնծալ, ցանկացածին հասնել. — աչքի աջ պտուղը՝ սրտնեղութիւն է.—ձախ աչքի պտուղը՝ բարի է.—աչքը ողջ խաղալ (աջ) բարի է, առողջանալ. հեռաւորն գալ. —Ձախ աչքն ողջ՝ շատ բարի է, գանձ գտնել, սրտնեղել և զայրանալ.—աջ աչքը կոպերով՝ հեռաւոր տեսնել.-Ձախը՝ հիւանդանալ, բայց ապրել։

Արտեւանունքն աջը և վերինը՝ հեռաւորն գալ, տրտմել և իր կամքը կատարել.—Ձախը՝ խնդալ և առողջութիւն գտնել.—աջ ներքեւի արտեւանունքը՝ լաց և սրտնեղութիւն է.—ձախը՝ սրտնեղութիւն է, բայց հեռաւորը գալ։

Օկտաատակն՝ մեծ մարդերից պատուի,

Քիթն՝ աջը, քիչ հիւանդանալ, նեղութիւնից ազատուել, կռուել.—ձախը՝ որդի առնել, թշնամիներէն յաղթել և առողջանալ։



Քթի ամէն մասերը՝ մեծերից շահ է։

Քթի ծայրը, պարտքից ազատուել, վշտանալ կամ մարդու հետ կռուել։

Քթափողը՝ մարդու հետ սիրահարուել կամ պարտքից ազատուել։

Քթի օղը՝ հարստանալ.—Երկու պինչը՝ հարստանալ, կամ սրտակիցն վնասուել։

Այտն աջ, տրտմել, հիւանդանալ և առողջանալ.—ձախը՝ որդի լինի սըրտնեղի, խնդալ և հարստանալ։

Երեսն աջ, գանձ գտնել և առողջութիւն է.—ձախը տրտմել, տկարանալ, վէրք ստանալ և կեանքը կարճ լինել։

Ականջն աջը—համբաւ լսել, խնդալ, տկարանալ և ազգականը մեռնել.-ձախը հեռաւորը գալ և առողջութիւն է։

Շրթունքի երկու կողմը՝ բամբասանք լսել տրտմել և սպալ. ներքեւի և վերեւի մասերը երբ խաղա իր սիրելիին համբուրել։

Շրթունքները՝ բարի է, գումար ստանալ։

Վիզն աջ՝ հեռու տեղից շահ գալ, բան գտնել, հարստանալ.— ձախը խնդա

հարստանալ և բամբասանք լսել. ամբողջ վիզը նեղութիւն, տունն այրուի և վիզը սրով կտրուի։

Թիկնամէջն աչք հարստանալ, բայց սրտնեղի.—ձախը՝ այն բանը կ'անես որ պատիւ չէ։

Թիկունքը, յորոգայթէ պատրաստ կաց։

Արմունկն—աչք սէր է, պաշտօն առնալ, գլուխը ցաւի, տրտմի հիւանդանալ և Աստուծով շուտով առողջանալ.—ձախը ցնծութիւն է, հեռ ցնալ; վիրաւորուի և հիւանդանալ։

Բազուկն աչք, համբոյր է, ցնծալ և հարստանալ.—ձախը, բարի և շահ լինի, մարդկանցից պատիւ ու գանձ գտնի։

Թեւն աչք ցաւի և նեղութեան հանդիպի.—ձախը վշտանալ։

Ձեռն աչք եթէ ողջ խաղայ, մեծերից պատուի, հարստանալ և ցնծալ, կամ դժբաղդութիւն պատահի, զգոյշ կաց.—ձախը բարի է, թագաւորից պարգև առնալ, խնդալ և հարստանալ։

Մատները աջ ձեռքի կ'տրտմի, վերջը



սիրտը կ'հանդարտուի—ձախ ձեռքինը գանձ և պատիւ է։

Ուսն աչք՝ առողջութեան նշան է և նոր շորեր հագնի.—ձախը խնդալ Աստուածանից և մարդկանցից պատիւ ու պարգև առնալ։

Ծիծն աչք ուրախանալ, ազգականները զօրանան, բազմանան.—ձախը հեռաւոր տեսնի, ընտանիքով խնդալ։

Կուրծքը խնդութիւն, բարի համբաւ հարստութիւն և սէր է.—աչք բարի է չարից ազատուի, անկարգ գործի պատճառով զղջալ.—ձախը, ամենքը կսիրեն և չարից կ'ազատուես։

Սիրտը սրտի նեղանալ է և տրտմութիւն.—աչք իւր սիրելիքը շատանան և ուրախանան.—ձախը տրտմութիւն է։

Ողն պակսի, զաւակ կ'ծնի և մեծութեան կ'հասնի.—ողի մէջք՝ բարի է։

Կողն աչք մեծութիւն է, պակսի, բարի է և ցնծութիւն ինչ էլ խնդրես Աստուածանից կ'տայ.—ձախը զաւակ ծնի և սիրտը հանգստանալ։

Փորը լաց է և տրտմութիւն, վերջը

մեծութիւն է և հարստութիւն։

Ունկն աջը վէճ է մեծութիւն և պատիւ.— ձախը վատ զրոյց լսի։

Սրունքն աջը հարստութիւն է, մեծերից գովասանք, ահը կ'անցնի.— ձախը հարստութիւն է, նեղութիւնից ազատուի։

Ընդամերն — աջը բարի, խնդութիւն, վախենալ և տրտմութիւն է.— ձախը բարի է և ուրախութիւն, բամբասուի և հետը թշնամանան։

Կոճը — աջը սիրելի մարդ կ'մեռնի և տրտմի.— ձախը վրան կ'խօսեն, բարի և ուրախութիւն է.— կոճի ներսը, բարի է և ուրախութիւն։

Նրբանը — աջը ճանապարհորդի, վախենայ, յետոյ բարի, և տրտմութիւնից ազատուի.— ձախը բանն աջողի և պատուի։

Թաթն — աջ ոտի, ուրախութիւն է և ճանապարհ գնայ.— ձախ ոտինը գանձ բարի է և հարստանայ։ Ողջ թաթն — տրտմի իւր ազգականից, ճանապարհ գնայ և իշխանութիւն ստանայ.— ձախ



թաթն, ազգականներից հեռանայ, տըկարանայ, ապրի և հարստանայ։

Ոտի մատերը — աջու բոլոր հինգ մատերը՝ ճանապարհ գնայ, բարի լինի, ցնծայ, պարգև ստանայ.— ձախինը դատաստան, նեղութիւն, վէրք է և աղքատանայ։

Ճկոյթը ոտի — աջը, մեծութիւն, և հարստութիւն, է կամքը կատարի կամ բան կորցնի.— ձախը տրտմի մեծիցը, սիրելիների մէջ աղմուկ, գանձ և առողջութիւն գտնի։

Բութը ոտի — աջը ուրախանայ, հեռաւորն գայ, հարստանայ.— ձախը առողջութիւն է, հեռաւոր տեսնի և սաստիկ հիւանդանայ։

Ճկոյթը ձեռքի — աջը, գանձ, հարստութիւն է, և զրպարտութիւն — ձախը վէճ է և աղմուկ. կ'բամբասեն, և կ'ուրախանայ։

Ձեռքը ողջ — աջը տրտմի բայց յետոյ իրար կ'հանգստանայ, չարը հեռանայ։

- ձախը, գանձի և պատուի հանդիպի-

Թուշը աջը թշնամիներից պատրաստ կաց. ձախը—բարութիւն է։

Կզակը—աջը կռիւ է, տկարանալ, Աստուծով ազատուի. —ձախը հեռաւորը գալ, ճանապարհ գնալ, առողջանալ և ցնծալ։

Երեսը—աջը առողջութիւն և գանձ է.—ձախը տրտմի, տկարանալ, (զգոյշ պիտի լինել) և շուտով կ՚վնասուի։

---

*) Թէև երազահանների և սրանց նման հրատարակութիւններն անլուրջ և աննպատակայարմար են տպագրութեան, բայց գաւառական մեր մի քանի գործակալների անընդհատ պահանջին զոհացում տալու համար, որպէս զի ընթերցանութեան գործը չը վնասուի և գաւառական ընթերցող հասարակութիւնը չզրկուի օրացոյցների միւս մասերում զետեղած օգտակար նիւթերից, հակառակ մեր ցանկութեան, հրատարակում ենք այս „Լիակատար երազահանը“ (աշխարհաբար վերածած և որոշ կերպիւ դասաւորուած), վերապահելով մեզ միայն նրա արտատպելու իրաւունքը։ Տ. Ա.

# ԲԱՂԴԱԳՈՒՇԱԿ *)




*) Հետևեալ VI բաժանմունքների հարցերից ամեն մինը, ցանկացողներն իրանց մտքումը պահում են և գնդակը գցում են վերը նշանակուած շրջանի մէջտեղը։ Իսկ պատասխանը պէտք է գնդակի տակի թուերի մէջ փընտռել։

## I Բաղդաւոր կը լինիմ արդե՞օք

1. Այո, կը լինես, բայց ծոյլ ես։
2. Որ չես աշխատում՝ ինչ կը լինես։
3. Եթէ առաւօտները վաղ զարթնես։
4. Գործիդ արի եղիր միայն:
5. Եթէ այդ ուրիշին ես ցանկանում:
6. Խնայողութիւն չունես։
7. Այնպէս չես վարւում՝ որ լինես։
8. Ինչ կը ցանես, այն էլ կը հնձես։
9. Որդկերանցով՝ ծեր ժամանակը։
10. Ամենքի հետ չես վարւում, կոչնչանաս, այդպէս մի շարունակիր։
1. Բաղդդ բնաւորութեան մէջն է։
12. Խոնարհութեամբ միայն կարող ես բախտաւոր լինել։

---

## II. Յաջողութիւն կունենամ

1. Միայն Ճարպիկ և հնարատես եղիր։
2. Եթէ քեզ աւելի խոնարհ պահես։
3. Եթէ ազնիւ և չափաւոր լինես,
4. Կանանց միջոցով ամեն բանի կը հասնես։



5. Եթէ թողնես յիմարութիւններդ։
6. Բոլորը՝ քեզանից է կախուած։
7. Միայն ամուսնացուդ հարուստ պէտք է լինի, թէ կուզ տարիքը 60-ից էլ անցնի։
8. Եթէ եռանդով գործես։
9. Առանց այն էլ ինքդ լաւ կաս։
10 Այնպէս, ինչպէս ինքդ ցանկանաս։
11. Ցանածդ դուրս կը գայ, ծլածդ կը ծաղկի։
12. Ամեն բանում յաջողութիւն կը գտնես, բայց կանանցից կարգին տանջուելու ես։

## III. Իմ իդէալս սիրու՞մ է ինձ արդեօք

1. Նայիր հայելուն, տես արդեօք կարելի՞ է քեզ սիրել։
2. Սիրում է, բայց ծածկում է,
3. Չի էլ մտածում այդ մասին։
4. Բայց քեզ հետ և ուրիշներին էլ է սիրում։
5. Նայելով թէ ի՞նչ ես ընծայելու։
6. Չե՞ս ամաչում, ի՞նչ քո սիրելուդ ժամանակն է։
7. Սիրում է և կսիրի միայն թէ մինչև

քո կարողութեան վերջին կոպէկը։

8. Քեզ շատ սիրելուց տանջւում է։

9. Միայն քանի որ տեսնում է քեզ։

10. Շատ քիչ։

11. Սիրում է քեզ միայն երբ լիքն է գրպանդ։

12 Ոչ սիրում է, ոչ ատում, այլ մի-մի անգամ միայն դուր ես գալիս։

## IV. Շուտ կըլինի արդեօ՞ք իմ հարսանիքը

1. Երբէք, եթէ վերջդ չմտածես։
2. Երբ քո քէփն է, միայն զգուշացիր։
3. Ո՞ւմն ես պէտք, կամ ո՞ւմն ինչ։
4. Մինչև քեզ չապահովես։
5. Երբ բարեկամ գտնես։
6. Երբ խելօքանաս։
7. Շատ ուշ ես մտածում։
8. Որ միտք չունես՝ լաւ է մի վանք մտնես։
9. Շուտ, հէնց այս տարի, բայց չես աշխատում։
10. Ունեցած առաւելութիւններդ գործ դիր։
11. Դու լաւ գիտես թէ երբ։
12. Դատարկ գրպանով ի՞նչ հարսանիք։



## V. Եկող տարի ինչպէ՞ս կը լինի

—

1. Նայելով թէ դու ի՞նչ կը լինես։
2. Լաւ, եթէ խելքդ գլխիդ պահես։
3. Եթէ առաջուց առած ունենաս վի-ճակահանութեան տոմսակ, կը տանես։
4. Ամառը շոգ՝ ձմեռը ցուրտ։
5. Հարուստների համար լաւ կը լինի։
6. Խելքիդ զոռ կը տաս, փող շատ կը ծախսես։
7. Այդ վատ բնաւորութիւնդ չես փոխել։
8. Բանդ որ պինդ չբռնես՝ շատ վատ կը լինի։
9. Ուրախ և բաղդաւոր։
10. Փողեր շատ կստանաս, շատ էլ կը ծախսես, տակը բան չի մնայ։
11. Յիմարը կաշխատի, խելօքը կուտի։
12. Ծնուածին կը մկրտեն, մեռնողին կը թաղեն։

## VI. Երկար կապրեմ արդեօ՞ք

—

1. Ամեն բանի մէջ չափաւոր լինելով՝ հարիւրից կանցնես։

2. Ոչ մի կողմից քեզ չես զսպում, ի՞նչ երկար կապրե՞ս:

3. Այնքան անգամ մէկ ու կէս, որքա՛ն ծնողքդ:

4. Եթէ պարտքեր չանես, իննսուն և ինը:

5. Անչափ աչքածակութիւնդ, կեանքդ կարճացնում է:

6. Ապրես՝ չապրես. ի՞նչ օգուտ, երբ ոչ քեզ համար ես և ոչ ուրիշի:

7. Ինն անգամ ինը տարի, բայց ցրտից զգուշացիր:

8. Գլուխդ հով, փորդ թոյլ և ոտքերդ տաք պահելով երկար կապրես:

9. Նախանձոտ սրտովդ երկար չես ապրելու:

10. Փառասիրութիւնդ է կեանքդ կարճացնում:

11. Գործդ իմացիր, քեզ դեռ այդ է հարկաւոր:

12. Ջրից զգուշացիր միայն: *)

---

*) Այս բաղդագուշակը զետեղում ենք որպէս պարապ ժամանակի խաղ՝ մեր ընթերցողների համար. Ծան. Աշխ.

# ԴԻՄԱԳՈՒՇԱԿ

Զանազան դարերում գիտնականները և փիլիսոփաները դիմագուշակութեանը մեծ նշանակութիւն են տուել, նոքա, մարդուս բարոյական արժանաւորութիւնները այդ գիտութեամբ էին որոշում, և այն ժամանակ այդ բացատրում էին նրանով, որ երևոյթ գծագրութիւնն է որ իբր հանդիսանում է միջնորդ մարդու ներքինի և արտաքինի մէջ:

Այսպէս էին այն գիտնականների կարծիքը, որոնց թւում անպայման պատկանում էին, Վօլֆը, Հէլլէրը, Սկալիգէրը, Դէկարտը, Մոնտօնը և նշանաւոր բնագէտ Բիւֆօնը:

Դիմագուշակութեան գիտութիւնը մարդկային կեանքին ժամանակակից է, այն պատճառով որ մարդիկ իրար հետ որև է յարաբերութիւն սկսելիս, չէին կարող ուրիշ կերպ քննել և միմեանց հասկանալ, եթէ ոչ արտաքինով, տեսքով և գծագրութեամբ: Նա շատ պատճառներով, այդ բնական է

թյուն, երբ հենց ներկայումս էլ երեսի գծագրութեամբ ու [illegible] գործերն են վճռում որ մեր կեանքում մեծ դեր են խաղում, օրինակ ինչպէս պսակն և այլն։ Դէմքի գծագրութեամբ և հայացքով է որ քննում են մարդուն, որոշում հիւանդին և նրա հիւանդութիւնը, Գծագրութեամբ յայտնվում է մարդու բարի, չար և զայրացկոտ լինելը. Մի խօսքով մարդու հենց մի հասարակ բարեձև տեսքը և քաղցրանկատ հայեացքը, մինչև անգամ ամենահոռետես մարդու աչքում մեծ դեր է կատարում և այնպիսի տպաւորութիւն անում, որ գրաւում է նրա սէրը և համակրութիւնը։

Ի հարկէ այդպէս էլ պէտք է լինի, որովհետև անձնական տեսակցութեամբ և իր ներկայութեամբ մարդը աւելի շուտ և մօտ է ճանաչվում, քան թէ նրա խօսքը և հեռուից ստացած նրա գրութիւնը։ Մարդ ամեն բանում կարող է խաբել, բայց նրա երեսը չի կարող մի անգամից այնպէս փոխուել, որ խաբի։ Եւ ճշմարիտ, ով կարող է նրա մտնել



մարդու հոգու խորքը կամ շոշափել նրա ուղեղը, թէ ինչ է գտնվում մարդու գանգի մէջ։

Ինչը կարող է թափանցել այն զգացմունքների անդունդը, հասկանալու համար այն հակումները և կրքերը, որոնցով լի են մարդու գլխի ներքնակողմըն։ Աչքերի և ականջի շնորհիւն է, որ լոյսի և ձայնի հրաշալիքները զաղտնագողի մտնելով մեր գլուխը, տալիս են մեր խելքին բաւականութիւն։

Դիմագուշակութեան գլխաւոր կանոնը, հիմնուած է հոգեկան դրութեամբ տեղի ունեցող զգացմունքներ ն անցնող և մարմնի և երեսի գծագրութեանց շարժողութիւնր արտայայտող յարձակումներով ինչպէս օրինակ հոգու խաղաղ դրութեան ժամանակ երեսը հանդիստ լինելով հասկացվում է մարդու յատկութիւնը. Մինչև անգամ ոչ թէ երեսի գծագրութիւնը, նոյն իսկ մարդու ձայնը նաև որոշում է մարդու դրութեան որպիսութիւնը, ինչպէս նաև նրա հոգու յատկութիւնը և այլն։ Ամենքիս հասկանալի է, որ երեսը կրքե-

մի արտացոլացումն է։ Զղջանքը, տըխրութիւնը, վիշտը, անքաղաքավարութիւնը և չիմարութիւնը դնում են իրենց դրօշմը մարդու ճակատին։ Հենց երբ նկատում ենք որ մարդ իր ճակատը խոնարհեց, յօնքերը կիտեց, դէմքը խոժոռեց, դրանից հասկացւում է որ զգացմունքը անցնում է կամքին, և մենք զգում ենք, որ մարդուն անհաճոյ է տեղի ունեցած խօսակցութիւնը և թէ առաջարկած խնդիրը մնալու է անկատար։

Ահա հոգու այս ժամանակաւոր հակումները, մարմնի շարժողութեամբ մշտապէս դնում են իրանց կնիքը մարդու երեսին։ Եւ այդ վատ հակումները սրտի խորքից վեր են սկսվում մի մասով երեսի գծագրութիւնը, որը յաճախ անցնում է սերնդից սերունդ։ Հենց այս հանգամանքներից է կախուած այն փոփոխութիւնները, որը յաճախ ոչընչացնում է գեղեցկութիւնը մարդկանցից, արբեցողութեան, զղջանքի, խանդոտութեան, ինքնասիրութեան և տխրութեան ազդեցութեամբ։



Ահա և այդ յայտնի փիլիսոփաների գուշակութեանց տեսակէտով։

## ՃԱԿԱՏԸ

Ճակատի լայնութիւնը—նըշան է այնպիսի խելքի, որ կարող է ընդգրկել շատ առարկաներ։

Կարճ ու սեղմուած ճակատը—հաստատ բնաւորութեան նշան է։

Կարճ ճակատը ըստ Բիւֆոնի. մարդուս յամառ, աղահ, և մաքրասէր ու շատակեր լինելն է ցոյց տալիս։

Լայն ու մեծ ճակատը ընդհանրապէս արտաքին ազդեցութիւններից դանդաղ տպաւորուելն ու անհասկացողութիւնն է արտայայտում.

Տափակ ճակատը առհասարակ ինքնահաւան լինելն է ցոյց տալիս։

Ճակատի վերին կողմն ուղղուած երբեմն է, հետքերի նման գծեր. թողնող կնճիռները՝ խելացութեան։

Ուռած, քնքուշ մորթ ունեցող ճակատը՝ ցոյց է տալիս տխրոջ քաղաքավարի, հաճոյական ու զուարճասէր բնաւորութեան տէր լինելը։

Դարուփոս, անհարթ ու մորթով ծածկուած ճակատը ստաֆոս, խորամանկ, ու դաւաճանող լինելն է ցոյց տալիս։

## ՅՕՆՔԵՐԸ

Հորիզոնական դրութեամբ ուղիղ գծով տարածուող յօնքերը այրական բնաւորութիւնն են արտայայտում։

Անկանոն դրութեամբ ու անկանոն գծերով յօնքերը՝ բնաւորութեան կոշտութիւնն են ցոյց տալիս։

Թանձր յօնքերն ու ուղիղ յօնամազերը—Ողջախոհութիւն, ճշմարտախօսութիւն ու խոհեմութիւն։

Աչքերին շատ մօտ դասաւորուած յօնքերը—Համառութիւն ու զննող բնաւորութիւն։

Շէկ յօնքերը—Թուլութիւն։ Նոսրը—Թեթևամտութիւն, երբեմն և խորամանկութիւն։ Թուխը—Նախանձ։

## ԱՉՔԵՐԸ

Ո՛վ գոհ է իր վիճակից, ո՛ւմ խիղճը մաքուր է, նրա հայեացքը միշտ հանդարտ է, մինչև անգամ համեստ, և հո-



գու անդորրութիւնն է արտայայտում։

Կապոյտ աչքերը—Թուլութիւն։

Ծաղկանակագոյնը—Հաստատ բնաւորութիւն։

Սևը—Կորովամտութիւն։

Մոխրագոյնը—Խորամանկ ու յողդողդ բնաւորութիւն։

Բացկապոյտը—Դանդաղ լինելը։

Խաժորը—Ծլատի ու շատակերի։

Վառվռունը—Այրական, անհերկեղ ու հնարագէտ բնաւորութեան և հայհոյիչ լինելու։

Շուտ շուտ աչքերը թարթողը կամ աչքացաւ ունի, կամ երկչոտ է։

Այն մարդը, որի աչքերը յաճախ դէպի գետինն են ընկնում՝ մտածող ու աշխատասէր է։

## ԲԵՐԱՆՆ ու ՇՐԹՈՒՆՔԸ

Սեղմ բերանը ցոյց է տալիս կարգապահութիւն, մաքրասիրութիւն, գործունէութիւն, ու ճշդութիւն։

Բաց բերանը—Մելամաղձոտութիւն։

Փակ բերանը—Համբերատարութիւն։

Լայն բերանը յիմարութեան նշան

է, եթէ վէրը է բարձրացած դէպի ռունգները, և ագահութեան՝ եթէ սեղմած է։

Փոքրիկ, նուրբ բերանը, համապատասխան փոքրիկ ճակատին ու քթին — թոյլ ու երկչոտ բնաւորութեան։

Հաստ շրթունքները հեշտասիրութեան ու որովայնամոլութեան։

Ստորին շրթան վերայ եղած փոսիկը՝ ուրախ բնաւորութեան նշան է։

Այն մարդը, որի խօսելու ժամանակ շրթունքների մի ծայրը վերև ու մի կողմն է բարձրանում, արհամարհող ու անզգայ բնաւորութեան տէր է։

## ՔԻԹՆ ու ՌՈՒՆԳՆԵՐԸ

Արմատի մօտ կորացած քիթը — Հրամայող ու խստաբարոյ լինելու նշան։

Ճակատի հետ ուղիղ գծով միացող քիթը — Հեզ բնաւորութիւն։

Շրթունքի վերայ կորացած քիթը — Սառը, անզգայ ու նեղսիրտ լինելը։

Վեր բարձրացած քիթը՝ բարձր ճակատի տակ — Կոպիտ ու բարկացկոտ։

Հարթ և ուղիղ քիթը՝ առանց նկատելի գծերի, ոչինչ առանձին ըն-



դունակութիւն չէ ցոյց տալիս։

Փոքրիկ ռունգները — Թուլութիւն ու երկչոտութիւն։

Կանոնաւոր զարգացած ռունգները — Հեշտասիրութիւն, և քնքշութիւն

Այս ու այն կողմն ուղղուած ռունգները — Բարկացկոտի ու կրքոտի նշան։

## ԿԶԱԿՆ ու ԱՅՏԵՐԸ

Սուր կզակը — Խորամանկութիւն ու արամտութիւն։

Տափակ կզակը — Մտածողութիւն։

Գէր կրնակի կզակը — Շատակերութիւն ու զգայունութիւն։

Փոքրիկ, կարճ կզակը — Թուլութիւն ու երկչոտութիւն։

Կլոր, փոսաւոր կզակը — Բարի բնաւորութիւն։

Երկու կէս եղածի պէս կզակը — Զգոյշ և խոհեմ լինելը։

Չոր ու կուճ եկած այտերը — Մելամաղձոտութիւն։

Գէր ու մսոտ այտերը — Մաղասային բնաւորութիւն ու կոպիտ միտումներ։

## ԱԿԱՆՋՆԵՐԸ

Մեծ ականջները — Անքաղաքավարութիւն ու ժլատութիւն։

Փոքր ականջները — Խորամանկութիւն ու խելք։

Հաստ ականջները — Պարոնութիւն։

Բարակ, թափանցիկ ականջները — Պատուականութիւն։

## ՄԱԶԵՐԸ

Սև ու խիտ մազերը, որոնք չեն ոլորւում քիչ խելք՝ բայց աշխատասիրութեան ու կարգապահութեան նշան։

Երկայն, հարթ մազերը — Գաղջ բնաւորութիւն։

Խորտիաշ մազերը — Քնքշութիւն։

Սև ու նուրբ, ոլորկ և փայլուն մազերը չարութեան նշան են, մանաւանդ երբ նրանց գոյնը յոնքերի գոյնից տարբերւում է։



## ՄԱՏՆԵՐԸ

Մեծ մատը — առաջի յօդը, ցոյց է տալիս կամքի ուժը լինելը, երկրորդը — դատողութիւն, երրորդը սէր։

Առաջի — մատը (Լուսնթագի մատը) եթէ երկար է, դատողութեան և խընայողութիւն է ցոյց տալիս. եթէ սըրածայր է.— սրամիտ հասկացողութիւն, եթէ քառանկիւնի, — ճշմարտասիրութիւն. եթէ վերջումը լայնացրած է (թիակի նման), — եռանդուն գործունէութիւն։

Երկրորդ մատը — (Կռոնոսի մատը) սրածայրը, — ունայնամտութիւն քառանկիւնաձևը, — զգուշութիւն, թիականմանը, — գործունէութիւն։

Երրորդ մատը — (Փայլածուի մատը) սրածայրը, — նկարչական ձիրք. քառանկիւնաձևը — ճշմարտութիւն, քննադատողութիւն, թիականմանը, թատերական տաղանդ։

Չորրորդ մատը — սրածայրը, — պերճախօսութիւն, քառանկիւնաձևը — քննադատական հաւատարմութիւն։

6731



## ԲԱՂԴԱՒՈՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԸ

Ֆրանսիական մի քանի գիտնական հեղինակների կարծիքով՝ ամուսնութեան համար գոյութիւն ունին թէ բաղդաւոր և թէ անբաղդ օրեր։ Նրանց դիտողութիւնների համաձայն, ամենից աւելի բաղդաւոր և հաճելի օրեր պէտք է համարել՝

Յունուարի 1, 3, 10, 19 և 21.
Փետրուարի 3, 10, 19 » 21.
Մարտի 3, 5, 12, 20 » 23.
Ապրիլի 2, 4, 12, 20 » 22.
Մայիսի 2, 4, 12, 20 » 23.
Յունիսի 1, 3, 11՝ 13 19 և 21.
Յուլիսի 1, 3, 12, 19 և 21.
Օգոստոսի 2, 11, 18, 20 և 30.
Սեպտեմբերի 1, 9, 16, 23 և 28.
Հոկտեմբեր 1, 8, 16 18 27 և 29.
Նոյեմբերի 5, 11, 13, 22 և 25.
Դեկտեմբերի 1, 8, 11, 16, 23 և 29

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ. ՍՍՀ

## ՏՕՆՔ ԿԱՅՍԵՐԱԿԱՆՔ

Ապրիլի 2.—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսրուհւոյ Ալէքսանդրայ Ֆէօդորովնայի։

Մայիսի 6.—Ծնունդ Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի։

Մայիսի 14.—Թագադրութիւն Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի և Ալէքսանդրայ Ֆէօդորովնայի։

« 25 Ծն. Ն. Կ. Մ. Թագուհի-Կայսրուհւոյ Ալէքսանդրայ Ֆէօդորովնայի։

Յուլ. 22.—Անուանակ. Ն. Կ. Մ. Մայր Թ. Կայսրուհւոյ Մարիայ Ֆէօդորովնայի։

Յուլ. 30։—Ծնունդ Ն. Կ. Մ. Թագաժառանգ Կայսր Ալէքսէի Նիկոլայեվիչի։

Օգոստ. 25.—Յիշատակ Նուաճման Արևելեան Կովկասու։

Հոկտ. 5.— ... ժառանգ ... ցեվիչի։

Հոկտ. 21 ... Մ.—Կայսր ...

Նոյեմբեր ... Կայսրուհւո...

Դեկտ. 6 ... Կ. Մ. Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի։

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0032321

38543

5917

«Ծոցի», «Սեղանի» և ռուսերէն լեզուով „Армянскій Календарь съ предсказаніями“ օրացոյցները (երեքը միասին) ճանապարհածախքով արժեն 80 կոպէկ։

Վաճառւում են Թիֆլիսի յայտնի գրավաճառանոցներում և բոլոր թղ-թեղէնների խանութներում։ Մեծ քանակութեամբ գնողներն աւելի զիջում ստանալու համար դիմում են մեզ։

Օրացոյցների մէջ տպագրւում են յայտարարութիւններ զանազան լեզուներով, ամենաաժան գնով։ Ցանկացողները դիմում են հետևեալ հասցէով.— Թիֆլիս՝ Մակար Չմշկեանին։ Тифлисъ. Макару Чимишкяну. Tiflis, Makar Tschimichkian.

Գին

059
9-70